

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԳԻՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական  
խորհուրդ՝

Գագիկ Նարոյթյունյան  
Սրբեն Նարոյթյունյան  
Վահե Սրեկանյան  
Վորոդյա Նովիաննիսյան  
Վալերի Դողոսյան  
Ռաֆայել Դադարյան  
Արուշակ Նախարարյան

Գլխավոր խմբագիր՝  
Գեորգ Ռշտունի

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

1(54)  
2010

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

* «Ժողովուրդ» ՀԱՄԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ - Վ ՊՈԴՈՍՅԱՆ .....	4
* ՀԱՆՐԱԳՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ - Վ ՊՈԴՈՍՅԱՆ .....	9

## II. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (782-795)

* ՍԳՈ-782. ԲԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՅԻԿ ԶԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԳԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԸ 14 ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	13
* ՍԳՈ-783. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՆԻՒՅԻ ԹՎԱԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	30
* ՍԳՈ-784. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	34
* ՍԳՈ-785. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ (ԳՅՈՒՂԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ (ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	37
* ՍԳՈ-786. ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԳԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԸ 14 ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	40
* ՍԳՈ-787. ԲԱՂԱՔԱՅԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԸ 8 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	46
* ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ .....	57
* ՍԳՈ-788. 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՆ ԹԵՀՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԻԳՐՈՒՆԵՐԳԵՏԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	60
* ՍԳՈ-789. 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՊԵԿ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ ՆՆԱՐՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՖԵՐՍԵՐՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	63

* ՍԳՈ-790. 2008 թվականի նոյեմբերի 24-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	66
* ՍԳՈ-791. 2007 թվականի դեկտեմբերի 13-ին ԱՍՄԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐՈՊԱ-ԿՈՎԿԱՍ-ԱՍԻԱ ՄԻՋԱՆՑՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ «ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	69
* ՍԳՈ-792. ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐԶ-ՄԱՐԱՇ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Գ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 113 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 9-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 114 ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	74
* ՍԳՈ-793. 2009 թվականի փետրվարի 26-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԳՐԱՄ ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	85
* ՍԳՈ-794. 2009 թվականի փետրվարի 26-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	89
* ՍԳՈ-795. 2009 թվականի փետրվարի 26-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	93



**Վազենի ՊՈՂՈՍՅԱՆ**

*ՀՀ սահմանադրական դատարանի անդամ*

**«Ժողովուրդ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

«Ժողովուրդ» հասկացությունը, ըստ գործածության բնագավառների, չափազանց ընդգրկուն ընկալումներ ունի եւ, հետեւաբար, յուրաքանչյուր կոնկրետ բնագավառում օգտագործելիս կարիք ունի որոշակի ճշգրտման: Բացառություն չեն նաեւ իրավագիտությունն առհասարակ եւ սահմանադրագիտությունը մասնավորապես: Այս առումով անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ յուրաքանչյուր հասկացություն, որն օգտագործվում է բազմաթիվ ոլորտներում, չնայած ընդհանրություններին, յուրաքանչյուր կոնկրետ բնագավառում դրսեւորում է իր առանձնահատկությունները եւ կարող է իմաստագրկվել կամ աղճատվել, եթե հաշվի չառնվեն այդ առանձնահատկությունները: Այդպիսի հասկացություններից է, անշուշտ, «ժողովուրդ» հասկացությունը, որն օգտագործվում է մի քանի տասնյակ գիտակարգերում (փիլիսոփայություն, ազգագրություն, ժողովրդագրություն, մշակութաբանություն, լեզվաբանություն եւ առհասարակ սոցիալական գիտությունները եւ այլն), չհաշված այդ բառի առօրյա օգտագործման բազմազան իմաստները:

Սահմանադրական իրավունքում «ժողովուրդ» ասելով սովորաբար հասկանում են տվյալ պետության՝ սոցիալ-տնտեսական եւ քաղաքական միասնական ընդհանրություն գոյացնող ամբողջ բնակչությունը՝ անկախ ազգային հանրությունների նրա բաժանումից: Այս իմաստով մի շարք պետությունների սահմանադրությունների համադրություններում գործածվում է «բազմազգ ժողովուրդ» արտահայտությունը: Այս համատեքստում ժողովուրդը վերածվում է ինքնիշխանության եւ իշխանության միակ կրողի: Բացի այդ, «ժողովուրդ» հասկացությունը կարող է նշանակել նաեւ ազգա-

յին-մշակութային հանրույթ, որը կարող է եւ կապված չլինել որեւէ պետութեան տարածքի հետ եւ այս դեպքում ժողովուրդը, փաստորեն, օգտագործվում է ազգ իմաստով: Նկատի ունենանք նաեւ, որ «ազգ» ասելով սովորաբար հասկացվում է մարդկանց հանրույթ, որը պատմականորեն ձեւավորվում է նրա հատկանիշները կազմող ընդհանուր տարածքի, տնտեսական կապերի, լեզվի, մշակույթի, հոգեւոր կերտվածքի, ավանդույթների ու սովորույթների հիման վրա: Անգլիալեզու եւ ռոմանալեզու երկրներում «ազգ» հասկացությունը սովորաբար օգտագործվում է հասարակություն, բոլոր քաղաքացիների ամբողջություն իմաստներով: Այդ երկրների սահմանադրություններում «ազգ» հասկացությունն արտահայտում է ոչ թե էթնիկական, այլ պետաքաղաքական ընդհանրությունը: Օրինակ, ըստ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության, գերմանացի նշանակում է ԳԴՀ քաղաքացի (հոդված 116, մաս 1): Նույնն է նաեւ Իսպանիայի Սահմանադրությունում (հոդված 19):

Այսպիսի պատկերացման հիման վրա, կարծում ենք, կարելի է հասկանալ, թե ի՞նչ է նշանակում «հայ ժողովուրդ» բառակապակցությունը, որով սկսվում է ՀՀ Սահմանադրության նախաբանը (պրեամբուլա): Սահմանադրությունների նախաբաններում, որպես կանոն, շարադրվում են սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը, սկզբունքային դրույթները, դրդապատճառներն ու նպատակները, պատմական նշանակությունն ու ընդունման անհրաժեշտությունը: Սահմանադրության նախաբանն ունի քաղաքական եւ գաղափարական չափազանց կարեւոր նշանակություն, որը կարող է արտահայտվել նաեւ պետական քաղաքականության հիմնարար սկզբունքների հռչակմամբ: Նախաբանը, սովորաբար, բովանդակում է, այսպես կոչված, «նորմեր-նպատակներ», «նորմեր-սկզբունքներ», որոնք պետք է հաշվի առնվեն սահմանադրության դրույթները մեկնաբանելիս եւ կիրառելիս: Ընդհանուր առմամբ որեւէ սահմանադրության նախաբան համարվում է սահմանադրության անբաժանելի եւ բաղկացուցիչ մասը եւ իշխանության բոլոր ճյուղերի համար ունի ոչ միայն բարոյական, այլեւ իրավական ուժ: Այդ մասին են վկայում նաեւ բազմաթիվ պետություններում սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների որոշումներում սահմանադրական դրույթների հետ մեկտեղ նախաբանների դրույթների վկայակոչումները: Այս տեսակետից բացառություն չէ նաեւ ՀՀ Սահմանադրության նախաբանը, որում, մասնավորապես, նշված են այն նպատակները, որոնց իրականացման համար ընդունվում է Սահմանադրությունը: Դրա հետ մեկտեղ ՀՀ Սահմանադրության նախաբանում վկայակոչվում է Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որը համարվում է ՀՀ Սահմանադրության ընդունման հիմք եւ փաստորեն դառնում նրա բաղկացուցիչ մասը:

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

Այժմ այս համատեքստում անդրադառնանք ՀՀ Սահմանադրության նախաբանի «հայ ժողովուրդ» հասկացության պարզաբանմանը: Այս առումով, թերեւս, կարիք կա ՀՀ Սահմանադրության նշված արտահայտությունը համեմատել այլ պետությունների սահմանադրությունների համանման արտահայտություններին: Այսպես, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունում նշված է. «Մենք՝ ԱՄՆ-ի ժողովուրդը...», կամ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունում՝ «Մենք՝ Ռուսաստանի Դաշնության բազմազգ ժողովուրդը...»: Նույնանման արտահայտություններ կան բազմաթիվ այլ պետությունների սահմանադրություններում: Ակնհայտ է, որ բոլոր այդ պետություններում սահմանադրություններն ընդունում են տվյալ պետությունների ժողովուրդները, կամ ավելի ստույգ ասած՝ քաղաքացիները: Եվ եթե այդ նույն սահմանադրություններում ասվում է, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, ապա դա նշանակում է, որ ի նկատի է առնվում տվյալ պետության քաղաքացուն: Ինչպես երևում է ՀՀ Սահմանադրության նախաբանից, հայ ժողովուրդ ասելով տվյալ դեպքում ի նկատի են առնվում ոչ թե եւ ոչ միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, այլև ամբողջ հայության հավաքականությունը:

Այս հանգամանքը, կարծում ենք, պատահական չէ, այլ հայ ժողովրդի պատմական անցած ճանապարհի տրամաբանական հետեւանքն է, որ քանով հայոց պետականության հաստատումը եւ ապահովումը վերաբերել եւ վերաբերում է ոչ միայն ՀՀ տարածքում ապրող բնակչությանը, այլև ողջ հայությանը, որը դարեր շարունակ, անկախ բնակության վայրից կամ քաղաքացիությունից, պայքարել է հանուն այդ նպատակի: Մյուս կողմից, եթե ի նկատի ունենանք, որ ՀՀ տարածքից դուրս ապրող հայերը հիմնականում հայտնվել են արտերկրում ոչ իրենց կամքով, այլ հարկադրաբար՝ պետականության բացակայության պայմաններում, բռնագաղթի հետեւանքով. բռնագաղթ, որն ի թիվս այլոց, հետեւանք էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական գաղափարները ճնշելու, սեփական պետություն եւ անկախ պետականություն կերտելուն ուղղված դարավոր նպատակներն ի չիք դարձնելու, ապա հասկանալի է դառնում «հայ ժողովուրդ» բառակապակցության առկայության արդարացիությունը եւ անհրաժեշտությունը:

«Հայ ժողովուրդ» հասկացությունը հիշատակվում է նաեւ Հայաստանի անկախության հռչակագրում (որը, ինչպես արդեն նշեցինք, ՀՀ Սահմանադրության բաղկացուցիչ մասն է), որի նախաբանում ամրագրված է, որ ՀՀ բարձրագույն իշխանությունները պատասխանատվություն են կրում «հայ ժողովրդի ճակատագրի առջեւ համայն հայության իղձերի իրականացման եւ պատմական արդարության վերականգնման գործում»: Ակն-

հայտ է, որ այստեղ եւս խոսքն ամբողջությամբ վերաբերում է հայ ժողովրդին՝ «համայն հայությանը», անկախ նրա քաղաքացիությունից կամ բնակության վայրից: Ավելին, Հռչակագրի 11-րդ հոդվածում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում եւ Արեւմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին», ինչից ակնհայտորեն երևում է, որ խոսքը հայ ժողովրդին վերաբերող կարեւոր իրադարձության մասին է եւ, հետեւաբար, «հայ ժողովուրդ» բառակապակցության հայտնվելը ամենեւին պատահական չէ, այլ խորապես գիտակցված է եւ ՀՀ Սահմանադրությունում ունի առանցքային նշանակություն:

Նշելով ՀՀ Սահմանադրությունում «հայ ժողովուրդ» բառակապակցության իմաստային նշանակությունը եւ դրա կարեւորությունը՝ կարող է ստեղծվել այն թյուր տպավորությունը, թե Սահմանադրությունն անտեսում կամ երկրորդական պլան է մղում քաղաքացիների (ինչպես հայ, այնպես էլ այլազգի) դերակատարությունը Հայաստանի Հանրապետության ստեղծման, կայացման ու պահպանության գործում, մանավանդ, երբ ակնհայտ է (ինչպես վերը բերված պետությունների օրինակն է վկայում), որ ցանկացած պետությունում սահմանադրությունն ընդունում են այդ պետության քաղաքացիները: Միանգամից նշենք, որ այս իմաստով ՀՀ Սահմանադրությունը բացառություն չէ: Հետեւապես, Սահմանադրության նախաբանում ամրագրված «Հայ ժողովուրդը ...ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը» դրույթը մեկնաբանելիս անհրաժեշտ է հարցը քննարկել, ինչպես պահանջվում է, միայն ու միայն Սահմանադրության ամբողջական համատեքստում, Սահմանադրության մյուս դրույթների համադրությամբ: Տվյալ դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նույն Սահմանադրությունում ամրագրված է թե ով է իրավասու ընդունել Սահմանադրությունը եւ ինչ կարգով: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության հոդված 111-ում հստակ նշվում է, որ «Սահմանադրությունն ընդունվում, կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով...», իսկ հոդված 30-ում ամրագրված է, որ հանրաքվեներին մասնակցել կարող են միայն ՀՀ չափահաս քաղաքացիները:

Բացի այդ, ՀՀ Սահմանադրությունում օգտագործվում է նաեւ «ժողովուրդ» հասկացությունը: Այսպես՝ հոդված 2-ում ամրագրված է, որ ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին, իսկ այդ նույն հոդվածի երկրորդ պարբերությունում նշվում է, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների միջոցով, եւ, ինչպես արդեն նշեցինք, ինչպես հանրաքվեներին, այնպես էլ ընտրություններին կարող են մասնակցել միայն ՀՀ չափահաս քաղաքացիները: Այսինքն՝ ասվածից միանշանակ բխում է, որ տվյալ դեպքում «ժողովուրդ» հասկացությունը

**ՎԵՐԼՈՒՑԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

նր կարող է հասկացվել միայն Հայաստանի Հանրապետության ժողովուրդ իմաստով: Այսպիսի պնդումը հիմնավորվում է նաև Հռչակագրի մի շարք դրույթներով. որոնք նույնպես բացառում են որևէ տարրնթերցում: Մասնավորապես, Հռչակագրի հոդված 3-ում նշվում է. «Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է...», իսկ երկրորդ մասում՝ «Հանրապետության ժողովրդի անունից...» եւ այլն:

Հարցի տվյալ ամբողջական քննարկմանը կնպաստեր, եթե հաշվի առնվեին նաև ՀՀ Սահմանադրության 7, 8.1, 11, 11.3, 12, 41, 54, 55 եւ մի շարք այլ հոդվածներ, որոնք մեկ այլ հոդվածի թեմա են՝ առավել ընդարձակ բացատրության անհրաժեշտությամբ: Ընդհանուր առմամբ վերը ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ «հայ ժողովուրդ», «ժողովուրդ» եւ համանման հասկացությունները ՀՀ Սահմանադրությունում ունեն կոնկրետ բովանդակություն եւ դրանցից յուրաքանչյուրի համար հստակ սահմանված են ինչպես դրանց կոնկրետ նշանակությունները, այնպես էլ դրանց փոխադարձ կապը:

Առանձնակի հետաքրքրություն կարող է ներկայացնել «հայ ժողովուրդ» հասկացության համեմատությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության համապատասխան հասկացությունների հետ, որքանով այդ Սահմանադրության նախաբանում հռչակվում է, որ Արցախի ժողովուրդը, իրականացնելով իր ինքնիշխան իրավունքը, ընդունում է ԼՂՀ Սահմանադրությունը: Տվյալ դեպքում Արցախի ժողովուրդը, որը Հայաստանի անկախության հռչակագրին համապատասխան՝ լինելով Հայաստանի Հանրապետության ժողովրդի մասը, իրականացրել է իր ինքնորոշման իրավունքը՝ անկախ պետականություն ստեղծելու ձեռով, դրանով իսկ ստանալով նոր կարգավիճակ: Դրա հետ մեկտեղ, Արցախի ժողովուրդը, կրելով մշակութային, լեզվական, կրոնական, սովորութային նույն հատկանիշները, շարունակում է մնալ հայ ժողովրդի անբաժանելի մասը: Արցախի Հանրապետությունը, դառնալով պետական կազմավորում՝ թեկուզ դեռևս միջազգայնորեն չճանաչված, ձեռք բերելով ինքնիշխանություն, իր նոր կարգավիճակին համապատասխան կարող է եւ պետք է իրականացնի ներքին եւ արտաքին այնպիսի ինքնուրույն քաղաքականություն, որը բխում է ԼՂՀ ինչպես պետական, այնպես էլ ազգային շահերից:

Այսպիսով, համեմատելով ՀՀ Սահմանադրությունում օգտագործված «հայ ժողովուրդ», «ՀՀ ժողովուրդ» հասկացությունները՝ պարզ է դառնում, որ դրանցից յուրաքանչյուրն ունի կոնկրետ սահմանադրաիրավական բովանդակություն եւ գտնվում են որոշակի հարաբերակցության մեջ: Միաժամանակ պարզ է դառնում, որ պետական իշխանության մարմինները ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան որոշակի պատասխանատվություն են կրում թե՛ Հայաստանի Հանրապետության ժողովրդի եւ թե՛ հայ ժողովրդի առջև:



## ՀԱՆՐԱԳՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հանրագրի (պետիցիա) իրավունք ասելով՝ սովորաբար հասկացվում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին (հատկապես բարձրագույն մարմիններին), պաշտոնատար անձանց ուղղված անհատական կամ կոլեկտիվ դիմումներ, առաջարկություններ, խնդրագրեր, բողոքներ, պահանջներ, որոնք նպաստում են մարդու իրավունքների ու ազատությունների, անձնական ու հասարակական շահերի պաշտպանությանը: Հանրագրի միջոցով հանրային իշխանությունները տեղեկացվում են որեւէ նշանակալի հիմնախնդրի կամ շահերի շուրջ ձեւավորված որոշակի վերաբերմունքի մասին: Հանրագրի իրավունքն ամրագրվել է նաեւ ՀՀ Սահմանադրությունում, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ եւ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք» (հոդված 27.1): Այդ իրավունքը թեւէ 27.1 հոդվածում վերապահված է միայն անհատներին (յուրաքանչյուրին), սակայն այն կարող է ունենալ նաեւ մարդկանց որեւէ խումբ, որքանով այդ խմբի յուրաքանչյուր անդամ առաջադրված հարցի շրջանակներում ունի համանման մոտեցում: Հանրագրի իրավունքը, Սահմանադրության 42.1 հոդվածին համապատասխան, տարածվում է նաեւ իրավաբանական անձանց (հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, տնտեսվարող սուբյեկտների եւ այլն) նկատմամբ: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սահմանադրության հոդված 28-ին համապատասխան յուրաքանչյուր ոք այլ անձանց հետ միավորումներ կազմելու իրավունք ունի, իսկ հոդված 42-ին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու օրենքով չարգելված գործողություններ, հետեւաբար մարդիկ իրավունք ունեն նաեւ **ժամանակավորապես** միավորվելու որեւէ կոնկրետ հիմնախնդրի լուծման համար եւ համատեղ (կոլեկտիվ) դիմում ներկայացնել հանրային մարմիններին:

**ՎԵՐԼՈՒՃԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**

Իր այսպիսի ուղղվածության շնորհիվ հանրագրի իրավունքն արտահայտում է հասարակական-քաղաքական կյանքի արդյունավետ կազմակերպման նկատմամբ անհատի եւ նրանց հանրությունների շահագրգռվածությունը եւ միաժամանակ դառնում է հանրային իշխանությունների եւ անհատի ու հասարակության ներդաշնակ համագործակցության հիմք: Այս առումով հանրագրի իրավունքը ընդգրկվում է քաղաքական իրավունքների ոլորտը եւ որպես այդպիսին նպաստում եւ ապահովում է ՀՀ Սահմանադրության հոդված 30-ի պահանջը՝ պետական կառավարմանը եւ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքը: Միաժամանակ այս իրավունքը հնարավորություն է ընձեռում երաշխավորելու մարդկանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների (ոչ միայն քաղաքական), ինչպես նաեւ օրինական շահերի պաշտպանությունը: Հասկանալի է նաեւ, որ այս իրավունքն ունի ոչ միայն անձնական, այլև հստակ արտահայտված հանրային բնույթ ու ուղղվածություն: Ընդ որում 27.1 հոդվածով սահմանված շրջանակներում քաղաքական այս իրավունքից կարող են օգտվել ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլև ՀՀ-ում օրինական հիմքերով բնակվող օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք: Ի դեպ, այս հարցը տարբեր երկրներում լուծվում է տարբեր կերպ: Այսպես, ԳԴՀ-ում հանրագրի իրավունքը վերապահված է յուրաքանչյուրին, ՌԴ-ում՝ միայն ՌԴ քաղաքացիներին, Ֆրանսիայում՝ բողոք-հանրագրի իրավունք տրված է յուրաքանչյուրին, իսկ հանրային մարմիններ կոնկրետ առաջարկություններով դիմելու իրավունքը վերապահված է միայն քաղաքացիներին:

Հանրագրի իրավունքին անդրադառնալիս անհրաժեշտ է նաեւ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ որեւէ անձ (ինչպես նաեւ կոլեկտիվ) կարող է դիմում կամ առաջարկություն ներկայացնել՝ ելնելով ոչ միայն սեփական կամ խմբային շահից, այլև համընդհանուր, հասարակական շահից: Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ անձնական շահը եւ հասարակական շահը միմյանցից մեկուսացված չեն եւ, որպես կանոն, հասարակական շահն իր մեջ ներառում է նաեւ շատերի անձնական շահն այնպես, ինչպես անձնական շահի պաշտպանությունը միաժամանակ նաեւ հասարակական շահի պաշտպանությունն է:

Ընդհանուր առմամբ հանրագրի իրավունքն անմիջականորեն կամ միջնորդավորված ձևով կապված է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի հետ (հոդված 27): Այսինքն՝ կարծիք արտահայտելը հանրագրի իրավունքի միջոցով կարող է դառնալ գործուն միջոց այս կամ այն հիմնախնդրի լուծման նպատակով արտահայտված տեսակետը, մոտեցումը դարձնելու հանրային մարմինների քննարկման առարկա:

Հանրագրի իրավունքն իր ներկայիս ըմբռնմամբ առաջին անգամ ամրագրվել է 1791թ. Ֆրանսիայի Սահմանադրությունում: Հետագայում արեւմտյան պետությունների համադրույթներում հանրագրի կամ հանրային մարմիններին դիմելու իրավունքն ընդհանուր առմամբ ներկայանում է իբրեւ պետության եւ հասարակության գործերում մարդկանց եւ քաղաքացիների մասնակցությունը իրականացնելու ձեւ, ինչպես նաեւ քաղաքական եւ իրավական որոշումների ընդունման գործընթացների վրա անհատների կամ մարդկանց խմբերի (կոլեկտիվների) ազդելու եղանակ: Այսպիսի պատկերացումը միաժամանակ ապահովում է քաղաքացիների կողմից հանրային մարմինների եւ պաշտոնատար անձանց գործողությունների նկատմամբ հսկողությունը եւ դառնում է դրանց անհարկի միջամտություններից ձերբազատվելու, իրավունքների ու ազատությունների իրացման, անձնական ու հասարակական շահերի պաշտպանության միջոց:

Հանրագրի իրավունքի նկատմամբ նման մոտեցումն ամրագրված է բազմաթիվ պետությունների սահմանադրություններում եւ համապատասխան օրենքներում: Մասնավորապես, ԳՂՀ Սահմանադրության հոդված 17-ում ամրագրված է հանրագրի իրավունքը, իսկ հոդված 45c-ում նշվում է, որ Բունդեստագը ձեւավորում է Հանրագրերի կոմիտե, որը համապատասխան օրենքով սահմանված կարգով պարտավոր է ուսումնասիրել խորհրդարանին ուղղված բողոքներն ու առաջարկությունները՝ անհրաժեշտության դեպքում այդ գործընթացում ընդգրկելով մյուս հանրային մարմինները: Բազմաթիվ երկրների պրակտիկան ցույց է տալիս, որ հանրագրի իրավունքը կարելի է կատարում հասարակության քաղաքական կամքի ձեւավորման գործընթացում, նպաստում է անհատների եւ նրանց միավորումների կամարտահայտմանն ու հասարակական իրավագիտակցության ձեւավորմանը եւ մարդու ու քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը: Հանրագրի իրավունքը որոշակի կարգավիճակ է ստացել նաեւ Եվրոպական Միության շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունում հանրային մարմիններին ուղղված դիմումների ու առաջարկությունների, ինչպես նաեւ բողոքների քննարկման ու ընթացք տալու հետ առնչվող հարցերը կարգավորվում են «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ բողոքները քննարկելու կարգի մասին» եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով, որոնք ընդունվել են մինչեւ 2005 թվականին ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելը: Հայտնի է, որ մինչ այդ փոփոխությունների ընդունումը Սահմանադրության մեջ հանրագրի իրավունք նախատեսված չէր: Հետեւաբար, սահմանադրական փոփոխություններից հետո անհրաժեշտ է կատարել որոշակի բարեփոխումներ՝ օրենսդրությունը համապատասխանեցնելով ՀՀ Սահմանադրության 27.1

հողվածի պահանջներին, մասնավորապես հաշվի առնելով տարբեր երկրների պրակտիկական հանրագրի իրավունքի գործնական իրականացումն ապահովելու նպատակով: Այս առումով առաջնահերթ նշանակություն ունի օրենդորդեն նախատեսել հանրագրի իրավունքի իրացման որոշակի (առանձնահատուկ) կարգ, ինչպես նաև սահմանել ողջամիտ ժամկետում հանրային մարմինների կոնկրետ պարտականությունները պատշաճ (պատճառաբանված ու հիմնավորված) պատասխաններ տալու եւ ընդունված որոշումներին ընթացք տալու համար:

Անհրաժեշտ է նաև նշել, որ թեև դատարանները նույնպես պետական մարմիններ են, սակայն դատարաններ դիմելու կարգը սահմանվում է դատավարական օրենքներով (քաղաքացիական, քրեական, վարչական եւ այլն), հետեւաբար՝ թերեւս այդ օրենքները նույնպես պետք է համապատասխանեցնել 27.1 հողվածի պահանջներին: Պատահական չէ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու իրավունք վերապահված է ոչ միայն անհատներին, այլև հասարակական կազմակերպություններին ու անձանց խմբերին (Եվրոպական կոնվենցիա, հողված 34):

Հանրագրի իրավունքի մասին խոսելիս պետք է միշտ նկատի ունենալ, որ մեծ քանակությամբ ստորագրություն պարունակող դիմում-առաջարկություններն ունեն որակական առանձնահատկություններ եւ վկայում են դրանցում առաջադրված հիմնախնդիրների հասարակական կարեւորությունը եւ այդ պատճառով պետական մարմիններից պահանջվում է դրանց նկատմամբ դրսեւորել հատուկ վերաբերմունք: Պատահական չէ, որ մի շարք ժողովրդավարական պետություններում բնակչությանն անգամ վերապահված է օրենսդրական նախաձեռնության իրավունք, որի իրականացման համար պահանջվում է տվյալ օրինագծի օգտին հավաքել ստորագրությունների որոշակի քանակություն (Իտալիայում՝ 50 հազար, Շվեյցարիայում՝ 100 հազար, Ավստրիայում՝ 200 հազար, Իսպանիայում՝ 500 հազար): Հայաստանի Հանրապետությունում ժողովրդական նախաձեռնություն նախատեսված էր «ՀՀ հանրաքվեի մասին» օրենքով (ընդունված 1991-ին): Հանրաքվեի մասին նոր օրենքով (2001) ժողովրդական նախաձեռնություն նախատեսված չէ:



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՅԻԿ ՉԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14 ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**2 դեկտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ա. Չալյանի ներկայացուցիչ Հ. Ալումյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արայիկ Չալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Չալյանի՝ 21.08.2008թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ դատա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ • ՏԵՂԵԿՎԱԳԻՐ • 1(54)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կան օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ դատական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածը վերնագրված է «Դատավորի անփոփոխելիությունը»: Հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Այն դեպքում, երբ տվյալ դատարանում գործը չի կարող քննվել դատավորների ինքնաբացարկները բավարարելու կամ այլ պատճառներով առաջացած դատավորների թվի անբավարարության հետեւանքով, վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ նույն ատյանի դատավորը կարող է մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այդ դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ դատավորի վարույթում գտնվող գործի քննությունը չի ավարտվել մինչեւ համապատասխան գործի քննության ավարտը: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

2. Ըստ գործում առկա դատական ակտերի՝ քրեական գործն ըստ մեղադրանքի Ռ-ազմիկ Թորգոմի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով, Մուսա Արտաշի Սերոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով եւ Արայիկ Միքայելի Չալյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 7-րդ կետերով 12.06.2008թ. որոշմամբ ՀՀ Հյուսիսային քրեական դատարանի կողմից (նախագահությամբ՝ դատավոր Հ. Մովսեսյանի) ընդունվել է վարույթ: ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի՝ 12.06.2008թ. թիվ 57Ա հրամանով ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի հիմքով թիվ ՀՅԶՐԴ-1/0046/01/08/ քրեական գործը քննելու համար Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Մարտին Սարոյանը եւ Արմեն Խաչատրյանը գործուղվել են ՀՀ Հյուսիսային քրեական դատարան՝ մինչեւ վերոհիշյալ գործի դատաքննության ավարտը՝ առանց Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի լիազորությունների կասեցման:

Նշված քրեական գործի դատաքննության ընթացքում ամբաստանյալներ Ռ-ազմիկ Սարգսյանի, Մուսա Սերոբյանի եւ Արայիկ Չալյանի պաշտպան, փաստաբան Հայկ Ալունյանը դատավորներ Մարտին Սարոյանին

Եւ Արմեն Խաչատրյանին է ներկայացրել ինքնաբացարկի մասին միջնորդություն՝ պատճառաբանելով, որ «տվյալ գործով դատարանի կազմի մեջ ընդգրկված երեք դատավորներից երկուսը՝ Մ. Սարոյանը եւ Ա. Խաչատրյանը ՀՀ Հյուսիսային քրեական դատարանի դատավորներ չեն հանդիսանում, եւ նրանց մասնակցությամբ դատարանը չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված, մինչդեռ Եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածով երաշխավորվում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի եւ հրապարակային դատաքննության իրավունք: Դատարանը, որի կազմում են գտնվում այդ դատարանի դատավորներ չհանդիսացող անձինք, չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

Դատավորներ Մարտին Սարոյանը եւ Արմեն Խաչատրյանը ներկայացված ինքնաբացարկի մասին միջնորդությունը մերժել են համապատասխանաբար՝ «Պաշտպանի կողմից ներկայացված ինքնաբացարկի միջնորդության վերաբերյալ» եւ «Ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը մերժելու մասին» 18.07.2008թ. որոշումներով:

Ընդ որում, դատավոր Մ. Սարոյանը, մերժելով ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը, այն պատճառաբանել է հետեւյալ կերպ. «... ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11 կետի համաձայն օրենքով սահմանված կարգով տարիներ առաջ նշանակվել են առաջին ատյանի դատարանի դատավոր»: Անդրադառնալով միջնորդության այն հատվածին, համաձայն որի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանը հակասում է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի պահանջներին, դատավոր Մ. Սարոյանը պատճառաբանել է նաեւ, որ. «... բարձրացված հարցը ինքնաբացարկի միջնորդության հետ որեւէ կապ չունի, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածում թվարկված ինքնաբացարկի հիմքերը կոնկրետ իմ նկատմամբ բացակայում է»:

Դատավոր Ա. Խաչատրյանը՝ մերժելով ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունը, այն պատճառաբանել է հետեւյալ կերպ. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի 1-ին մասում նշված են դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու համար նախատեսված հիմքերը, որոնցում բացակայում են սույն քրեական գործով պաշտպանի կողմից նշված հիմքերը: Սույն քրեական գործը քննելու համար ՀՀ Հյուսիսային քրեական դատարան ես գործուղվել եմ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

զահի որոշմամբ՝ 12.06.2008թ. թիվ 57Ա հրամանով, ինչը բխում է օրենքից՝ ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից եւ տվյալ նորմով է սահմանված, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ նույն ատյանի դատավորը կարող է մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այլ՝ նույն ատյանի դատարան: Այսինքն՝ ինձ ՀՀ Հյուսիսային քրեական դատարան գործուղելը եւ տվյալ գործով դատարանի կազմում ընդգրկելը կատարվել է օրենքի հիման վրա ու չի հակասում Եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածի պահանջին, եւ իմ կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմքեր չկան»:

Ըստ վերը նշված դատական ակտերի՝ նշված որոշումները բողոքարկման ենթակա չեն:

3. Վիճարկելով ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրականությունը, դիմող կողմը գտնում է, որ այն առաջացնում է իրավական անորոշություն, դրա հետեւանքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության միջեւ հակասություն, եւ այդ հիմքերով հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 55-րդ հոդվածի 11-րդ կետին, 92-րդ հոդվածի 3-րդ մասին, 94-րդ հոդվածի 2-րդ մասին: Մասնավորապես, ըստ դիմող կողմի՝ «...օրենքից չի հետեւում, թե ի՞նչ հանգամանքներ պետք է հաշվի առնվեն վճռաբեկ դատարանի նախագահի կողմից՝ որոշելու համար, թե դատավորներից ո՞ր մեկը պետք է գործուղվի այս կամ այն դատարան, որքա՞ն ժամանակով, արդյո՞ք գործուղվելու մասին որոշում կայացնելուց հաշվի են առնվում դատավորների մասնագիտացումը, տարիքը, նախասիրությունները, կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը կամ որեւէ այլ հատկանիշներ: Արդյո՞ք գործուղումը կատարվում է մրցույթի արդյունքների կամ այլ ընտրության հիման վրա, թե որեւէ այլ չափանիշներից ելնելով, արդյո՞ք հաշվի է առնվում այդ ժամանակ դատավորի ցանկությունը: Արդյունքում օրենքը վճռաբեկ դատարանի նախագահին հնարավորություն է տալիս ՀՀ Հյուսիսային քրեական դատարանը ամբողջությամբ ձեւավորելու, օրինակ, վարչական դատարանի դատավորներից, կամ՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին ամբողջ կազմով տեղափոխել Հարավային քրեական դատարան, իսկ Հարավային քրեական դատարանի դատավորներին՝ վարչական դատարան եւ այլն: Օրենքի մյուս անորոշությունը կամայական որոշումների հնարավորություն է տալիս»:



Ըստ դիմող կողմի՝ վիճարկվող դրույթի իրավական անորոշության հետևանքով ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ա հրամանի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության միջեւ առաջանում է անհամապատասխանություն: Մասնավորապես, ըստ դիմող կողմի՝ վճռաբեկ դատարանի նախագահը, որոշում կայացնելով որոշակի քրեական գործ քննելու համար մեկ այլ դատարանից կոնկրետ դատավորներ գործուղելու մասին, ստեղծում է դատարան, որը պետք է քննի տվյալ գործը: Դատարան ստեղծելու իրավունք վճռաբեկ դատարանի նախագահին տալիս է վիճարկվող օրենքը: Սակայն այդ օրենքը, փաստորեն, թույլ տալով վճռաբեկ դատարանի նախագահին ստեղծելու դատարաններ, չի սահմանում դրանց ստեղծման կարգը եւ չափանիշները, որի արդյունքում վճռաբեկ դատարանի նախագահը հնարավորություն է ստացել իր բացարձակ հայեցողությամբ, կամայականորեն ստեղծելու դատարան՝ այս կամ այն գործը քննելու համար:

Նույն ատյանի դատարանի դատավորի՝ նույն ատյանի դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ գործուղվելը դիտարկելով որպես դատարանի ստեղծում, պնդելով իր այն տեսակետը, որ «Դատարան ստեղծելու իրավունք վճռաբեկ դատարանի նախագահին տալիս է վիճարկվող օրենքը», հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն այն մասին, որ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանող օրենքը չի կարող համարվել օրենք, դիմող կողմը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթի հիման վրա ստեղծված դատարանը չի համապատասխանում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակապակցության բովանդակությանը, քանի որ օրենքի վիճարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ուստի եւ չի կարող համարվել օրենք:

Վերլուծելով վիճարկվող դրույթի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 92 հոդվածի երրորդ մասի դրույթների փոխառնչությունները, հիմնվելով «արտակարգ դատարան» հասկացության բովանդակության մեկնաբանության սեփական տարբերակի վրա, դիմող կողմն ընդհանուր հետեւություն է անում, որ վիճարկվող դրույթի հիման վրա դատարանի ստեղծումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետին համապատասխան դատարանների ստեղծման կարգին, եւ վիճարկվող դրույթով սահմանված կարգով ստեղծ-

ված դատարանն արտակարգ դատարան է, որի ստեղծումն արգելված է ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի երրորդ մասով:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնում:

Պատասխանող կողմը, ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը հիմնականում վերլուծելով «օրենքի հիման վրա ստեղծված, անկախ եւ անկողմնակալ դատարանի»՝ Կոնվենցիայի չափանիշներին համապատասխանության տեսանկյունից, հղում կատարելով *Coeme and others v. Belgium* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000թ. հունիսի 22-ի վճռում արտահայտված իրավական դիրքորոշմանը, գտնում է, որ նշված իրավական դիրքորոշման մեջ արտահայտված ձեռնարկն պահանջը ՀՀ օրենսդրությամբ լիովին պահպանված է, քանի որ «...դատական համակարգի կազմակերպման կանոնները սահմանված են բացառապես օրենքներով: Օրենքով է սահմանված նաեւ դատավորին մեկ այլ դատարան գործուղելու՝ վճռաբեկ դատարանի նախագահի իրավունքը եւ գործուղման ընթացակարգը»: Պատասխանող կողմը շեշտում է նաեւ այն հանգամանքը, որ թիվ 63486/00 գանգատի հիման վրա հարուցված՝ «Պոստխովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գանգատի քննության ընթացքում չի անդրադարձել ժողովրդական ատենակալների նշանակման դատավարական կարգին, քանի որ միայն այն հանգամանքը, որ նշանակումն իրականացվում է օրենքի հիման վրա, դատարանը բավարար է համարել ատենակալների մասնակցությամբ դատարանը «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» դիտելու համար:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասում հստակ սահմանված են դատավորներ գործուղելու մասին որոշում կայացնելու անհրաժեշտ իրավական չափանիշները, որոնք առավել հստակ ու մանրամասն են շարադրված, քան եվրոպական երկրների օրենսդրությամբ դատավորի գործուղման ընթացակարգի կանոնակարգումն է: Հիմնավոր չհամարելով դիմողի առաջարկությունն այն մասին, որ գործուղման մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնել դատավորների մասնագիտացումը, տարիքը, նախասիրությունները, կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը կամ որեւէ այլ հատկանիշ՝ պատասխանող կողմը գտնում է, որ տարիքը եւ նախասիրությունները կազմակերպական բնույթի են, եւ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից կարող են հաշվի առնվել գործուղման մասին որոշում կայացնելիս, իսկ կոնկրետ գործի վերաբերյալ դիրքորոշումը դատավարական բնույթի է, եւ

օրենքով նախատեսված են դրան հակազդելու համապատասխան դատավարական մեխանիզմներ, ինչպիսին, ի թիվս այլոց, դատավորին բացարկ հայտնելու՝ մեղադրյալի իրավունքն է:

Հիմնվելով «արտակարգ դատարան» հասկացության բովանդակության մեկնաբանության սեփական տարբերակի վրա՝ պատասխանող կողմը հիմնավոր չի համարում վիճարկվող դրույթներով արտակարգ դատարան ստեղծելու հնարավորության մասին դիմող կողմի տեսակետը եւ ընդհանուր հետեւություն է անում, որ «ՀՀ դատական համակարգի կազմակերպման եւ գործունեության կարգը նախատեսված է ՀՀ Մահմանադրությամբ եւ օրենքներով: Օրենքով են նախատեսված նաեւ դատավորներին գործուղելու մասին որոշում կայացնելու՝ վճռաբեկ դատարանի նախագահի իրավունքը եւ գործուղման պայմանները: Վճռաբեկ դատարանի նախագահը գործուղման մասին որոշում կարող է կայացնել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում: ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով գործուղվում են միայն օրենքով սահմանված կարգով նշանակված դատավորները, գործուղումն իրականացվում է բացառապես օրենքով նշված հիմքերի առկայության պայմաններում եւ կարգով, գործուղված դատավորներն արդարադատություն իրականացնում են օրենքի հիման վրա՝ ապահովելով Մահմանադրությամբ եւ օրենքներով ամրագրված սկզբունքների կենսագործումը»:

Պատասխանող կողմը մատնանշում է նաեւ, որ դատավորի գործուղման ինստիտուտը նախատեսված է նաեւ այլ պետությունների, մասնավորապես՝ Բուլղարիայի, Լիտվայի, Լատվիայի, Սերբիայի, Խորվաթիայի, Էստոնիայի, Գերմանիայի դատարանակազմական օրենսդրությամբ:

Պատասխանող կողմն ընդունում է, որ, այնուամենայնիվ, դատավորների գործուղման ինստիտուտի կանոնակարգումը պետք է համապատասխանի ամբողջ դատական համակարգի կազմակերպման եւ գործունեության տրամաբանությանը, ինչի արդյունքում այն կդիտվի ոչ թե որպես օրինաչափություն, այլ դատական համակարգի բնականոն գործունեությունն ապահովող բացառիկ միջոց:

5. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողն իր իրավունքների խախտումը հիմնականում պայմանավորում է ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթում, իր կարծիքով, իրավական անորոշության առկայությամբ, դրա հետեւանքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 2008թ. հունիսի 12-ի թիվ 57Ն հրամանի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 (1) հոդվածում՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» բառակա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պակցության միջև հակասությանը, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի 1-ին մասի եւ 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարելի է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, դրա կիրառման պրակտիկայում դրսևորված մոտեցումների գնահատման, օրենքի վիճարկվող դրույթի իրավակարգավորման ուղղվածության, խնդիրների եւ նպատակների բացահայտման անհրաժեշտությունը:

6. ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի վիճարկվող դրույթի իրավակարգավորումն ունի երկու բաղադրիչ.

ա/ դատավորի գործողման իրավակարգավորումը տարածվում է նույն ատյանի դատավորի «այդ դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա» գործուղելու նկատմամբ,

բ/ նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործողման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Վերը նշված իրավակարգավորման վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործողման իրավակարգավորման խնդիրը մի դատավորին մեկ այլ դատավորով ժամանակավորապես փոխարինելն է կամ դատական ծանրաբեռնվածության հաղթահարումը՝ ողջամիտ ժամկետում գործերի քննության համար, ինչը, իր հերթին, նպատակաուղղված է դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացման ապահովմանը, որով հետապնդվում է իրավաչափ նպատակ:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետը վերաբերում է դատարանների՝ որպես պետական իշխանության մարմինների կազմավորմանը: Մինչդեռ վիճարկվող դրույթը վերաբերում է բացառիկ դեպքերում, իրավաչափ նպատակով պայմանավորված օրենքի հիման վրա ստեղծված դատարանում այլ դատարանի դատավորի (դատավորների) ընդգրկմամբ դատական կազմի ձեւավորմանը: Հետեւաբար՝ նման լուծումները չեն կարող հանգեցնել դատարանի՝ որպես առանձին պետական իշխանության մարմնի ստեղծման: Տվյալ դեպքում գործուղվող դատավորի լիազորությունները դադարեցվել կամ դադարել չեն կարող, առկա չէ տվյալ դատարանի դատավորների՝ օրենքով սահմանված թվակազմի նվազում, առկա չէ դատավորի թափուր պաշտոն, հետեւաբար՝ դատարանի կազմավորման կարգով դատական կազմ ձեւավորելու պահանջ: Փոխարինվող դատավորը՝ ՀՀ Նախագահի կողմից նշանակված լինելով տվյալ դատարան-

նի դատավոր, պարտավոր է շարունակել մնալ այդպիսին, ընդգրկված մնալ տվյալ դատարանի դատավորների՝ օրենքով սահմանված թվակազմում՝ իր լիազորությունների ողջ ծավալով, գործողման ժամանակ գործողված դատավորի լիազորությունների որեւէ ձեւով դադարեցում տեղի չի կարող ունենալ: Հետեւաբար, գործողման հիման վրա ձեւավորված դատական կազմերի միջոցով գործի քննությունը միանգամայն իրավաչափ է եւ իրականացվել է դատավարական պատշաճ ընթացակարգով:

Հիմնական խնդիրն այն է, որ վեճի առարկա դրույթում «իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ կամ առանց դրա» արտահայտությունը որոշակի շփոթ է առաջացրել: Անորոշ է մնացել, թե տվյալ իրավակարգավորման շրջանակներում որո՞նք են հիմնական եւ ոչ հիմնական լիազորությունները: Ի՞նչ տարբերակում է դրված «լիազորությունների իրականացման կասեցում» եւ «լիազորությունների կասեցում» հասկացությունների միջեւ: Առկա իրավակարգավորումը կարող է ենթադրել նաեւ, որ փաստորեն վճռաբեկ դատարանի նախագահը նոր, ժամանակավոր նշանակում է կատարում՝ կասեցնելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները, նրան ժամանակավորապես նշանակելով մասնագիտացված դատարանի դատավոր: Այնինչ, ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետը եւ 95 հոդվածը դատավորների նշանակման եւ լիազորությունների դադարեցման միանգամայն այլ ընթացակարգեր են սահմանել, եւ որեւէ բացառություն նախատեսված չէ:

ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի եւ 95 հոդվածի պահանջները հաշվի առնելով, նկատի ունենալով, որ դատավորը ՀՀ արդարադատության խորհրդի առաջարկությամբ ՀՀ Նախագահի կողմից նշանակվում է որպես կոնկրետ դատարանի դատավոր, տվյալ դատարանում նրա լիազորությունների ժամանակավոր կասեցմամբ այլ դատարան բացառիկ անհրաժեշտությունից ելնելով գործողման խնդիրը կարող էր լուծվել միմիայն դատավորի պաշտոնում նշանակման գործընթացի տրամաբանության սահմաններում: Օրենքը չի կարող վճռաբեկ դատարանի նախագահին լիազորել կասեցնել ՀՀ Նախագահի հրամանագրի գործողությունը՝ թեկուզ ժամանակավորապես: Օրենքով նրան վերապահված մնան լիազորությունը չի բխում ՀՀ Սահմանադրության 1-ին, 6, 49, 55 եւ 95 հոդվածների դրույթներից: Իրականում մնան մոտեցում արտահայտված է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի՝ վեճի առարկա 3-րդ մասում եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված նույն հոդվածի 5-րդ մասում: Վերջինս նախատեսում է, որ «Այն դեպքում, երբ տվյալ դատարանում քննվող գործերի ծավալը փոքր է տվյալ դատարանում աշխատող դատավորների թվի համեմատ, այդ դատարանի դատավորը կարող է վճռա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

քեկ դատարանի նախագահի որոշմամբ մինչև 6 ամիս ժամկետով գործուղվել այլ դատարան՝ իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ: Նշված ժամկետը կարող է երկարաձգվել միայն այն դեպքում, երբ դատավորի վարույթում գտնվող գործի քննությունը չի ավարտվել մինչև համապատասխան գործի քննության ավարտը: Նույն դատավորը չի կարող կրկին գործուղվել նախորդ գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում»:

7. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դատավորի գործուղման վերաբերյալ վիճարկվող իրավակարգավորումը դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով սահմանված՝ դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները նախատեսված են նաև Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 եւ 13 հոդվածներով:

Պետությունը պարտավոր է համապատասխան իրավական, կազմակերպչական, ինստիտուցիոնալ երաշխիքներ ստեղծել սահմանադրական այդ իրավունքներն իրականացնելու ուղղությամբ:

Նման իրավական երաշխիք է տվյալ դատարանում դատավորների թվի անբավարարության հետեւանքով գործի քննության անհնարինության դեպքում նույն ատյանի դատարանի դատավորին նույն ատյանի դատարան կամ վճռաբեկ դատարանի այլ պալատ գործուղելու իրավական հնարավորությունը՝ նախատեսված ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով:

Անդրադառնալով դատավորի գործուղման իրավաչափությանը նրա կարգավիճակից բխող գործունեության անթույլատրելիության տեսանկյունից՝ սահմանադրական դատարանը, սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, հիմք ընդունելով նաև ՀՀ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Սահմանադրության 97 հոդվածի առաջին մասը եւ ՀՀ դատական օրենսգրքի 4 հոդվածի 2-րդ մասը, որոնց համաձայն դատավորն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքում՝ վիճարկվող դրույթի եւ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի այլ դրույթներով սահմանված գործուղման հնարավորության նախատեսումն ինքնին իրավաչափ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ տվյալ դատարանում դատավորների թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետեւանքով գործի քննության անհնարինության հետեւանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:

Այս ինստիտուտի անհրաժեշտությունը թելադրված է անձի դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների ապահովմամբ եւ հիմնավորված է նաեւ Դատավորի կարգավիճակի մասին եվրոպական խարտիայում:

Այլ խնդիր է, թե որքանով են գործուղման փաստացի իրավակարգավորումներն ու դրանից բխող իրավակիրառական պրակտիկան ապահովել արդարադատության իրականացման սահմանադրական պահանջները, այդ ոլորտում մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, դատական պաշտպանության արդյունավետությունը:

8. Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում նշված խնդիրը դիտարկել նաեւ «նույն ատյան» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, ինչպես նաեւ դատավորների գործուղման գործընթացի իրավակարգավորման լիարժեքության տեսանկյուններից:

ՀՀ Սահմանադրությունը, սահմանելով ՀՀ դատական համակարգի կառուցվածքը, միեւնույն ժամանակ հնարավոր է համարել այնպիսի իրավիճակի ձեւավորում, որտեղ հասարակական հարաբերությունների զարգացման, ինչպես նաեւ դրանց առավել բարդ իրավական կարգավորվածության պայմաններում արդյունավետ արդարադատություն իրականացնելու համար կպահանջվի առավել խոր մասնագիտական մոտեցում եւ լուծումներ: ՀՀ Սահմանադրությունը, նման իրավիճակի գնահատման լիազորությունը վերապահելով օրենսդրին, նախատեսում է նաեւ օրենքով մասնագիտացված դատարաններ ստեղծելու հնարավորություն: Սահմանադրական նորմի բովանդակության նորմատիվ տարրն է կազմում այն պահանջը, համաձայն որի՝ նման դատարանը պետք է իրականացնի արդարադատություն որոշակի իրավագործության շրջանակներում. դա այդ մարմնի բացառիկ իրավասությունն է, այլ դատարան իրավասու չէ քննել

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նման գործեր, ինչպես նաև մասնագիտացված դատարանն իրավասու չէ քննել այլ դատարանի իրավասությանը վերապահված գործեր: Նույն կերպ, մասնագիտացված դատարանի դատավորը, որն օժտված է արդարադատություն իրականացնելու իրավասությամբ, որպես մասնագիտացված դատարանում դատավորի պաշտոն զբաղեցնող անձ կոչված է իրականացնելու արդարադատություն՝ բացառապես իրավունքի այդ կոնկրետ բնագավառում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքով այս խնդիրը կանոնակարգելիս հետետողականություն չի դրսևորել ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի պահանջները լիարժեք հաշվի առնելու հարցում: Այդ մասին սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԳՈ-758 որոշման մեջ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված դատարան ստեղծելու՝ սահմանադրական նորմի տված հնարավորության իմաստը ոչ թե գործերի մեխանիկական բաժանումն է տարբեր դատարանների միջև, այլ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող համակարգի ստեղծումն է, որտեղ գործերի բաշխումը տարբեր իրավասությամբ օժտված դատարանների միջև կիրականացվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման տեսանկյունից արդարացված չափանիշներով, որի պայմաններում իրավասու դատարաններն իրենց մասնագիտական որակավորմամբ ի վիճակի կլինեն իրականացնել արդյունավետ մասնագիտական արդարադատություն:

Այդ պահանջից ելնելով է, որ գործող օրենսդրությունը որոշակի տարբերակում է դրել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների միջև: Մասնավորապես, դա վերաբերում է թե՛ այդ դատարանների քննությանը ենթակա գործերի բնույթին ու շրջանակներին եւ թե՛ դատավորների նշանակման ու առաջխաղացման կարգերին: Օրինակ, ՀՀ դատական օրենսգրքի 22 հոդվածը սահմանել է, որ «Ընդհանուր իրավասության դատարանին են ենթակա բոլոր գործերը, բացառությամբ քաղաքացիական, քրեական եւ վարչական դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»: Միարժեքորեն օրենսդիրը ՀՀ դատական օրենսգրքի 22, 27, 31 եւ 35 հոդվածների 1-ին մասերով տարբերակել է ՀՀ դատական օրենսգրքով ձեւավորված մասնագիտացված դատարաններին եւ ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա գործերի շրջանակները: Դրանով իսկ այդ դատարանները գործառութային առումով չեն կարող դիտվել որպես նույն առյանի համասեռ դատարաններ: Բացի դրանից, ՀՀ դատական օրենսգրքի 122, 123, 126 եւ 127 հոդվածնե-



րը սահմանում են ընդհանուր իրավասության դատարանների դատավորի թափուր տեղի համար թեկնածու առաջարկելու, դրանց կողմից առաջարկն ընդունելու կարգի եւ չընդունելու հետեւանքների, թափուր պաշտոնում դատավոր նշանակելու, դատավորների պաշտոնների փոխանակման այնպիսի կարգեր, որոնք նույնական չեն նույն օրենսգրքի 128, 129, 130, 131, 133 եւ 134 հոդվածներով առաջին ատյանի մասնագիտացված դատարանների դատավորների առնչությամբ նախատեսված կարգերի հետ: Ավելին, նույն օրենսգրքի 135 հոդվածը, սահմանելով դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակի կազմման, դատարանի նախագահի, առաջին ատյանի մասնագիտացված, վերաքննիչ դատարանի դատավորի, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի եւ նախագահի նշանակման հետ կապված՝ քվեաթերթիկներով քվեարկության ժամանակ հաշվի առնվող հատկանիշները, այս ցանկում բնականորեն չի ներառում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատավորներին:

Դատական օրենսգրքի նշված եւ մի շարք այլ հոդվածների (մասնավորապես՝ 3-6-րդ գլուխների եւ 136 ու 137 հոդվածների) համալիր վերլուծությամբ հետեւում է, որ իրավակարգավորման տարբեր մոտեցումներ են դրսևորվում ընդհանուր իրավասության առաջին ատյանի եւ մասնագիտացված դատարանների հանդեպ:

Նկատի պետք է ունենալ նաեւ, որ ԵԽ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին դատավորների անկախության, արդյունավետության եւ դերի մասին No. R (94) 12 հանձնարարականի՝ «Դատավորների անկախության ընդհանուր սկզբունքները» մասի 2-րդ կետի c. ենթակետի համաձայն՝ դատավորների պրոֆեսիոնալ մասնագիտացմանը վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, դատավորների ընտրությունը եւ մասնագիտացումը պետք է հիմնված լինի այն հատկանիշի վրա, որը կապված է որակավորման, ազնվության, ունակության եւ արդյունավետության հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասում «նույն ատյան» բառակապակցությունը տվյալ օրենքով նախատեսված իրավակարգավորման շրջանակներում կիրառելի է միայն կառուցակարգային եւ գործառնական նույնաբնույթ կարգավիճակ ունեցող դատարանների առնչությամբ: Դա չի կարող մեկնաբանվել այնպես, որ նույն հարթության վրա դրվեն գործառնական տարբեր իրավասություն ունեցող ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանները: Այստեղ նույնպես հիմնական խնդիրը վերաբերում է առաջին ատյանում դատարանների մման մասնագիտացման հիմնավորվածությանը, եւ կասկած չի կարող առաջանալ օրենքի հիման վրա ստեղծ-

ված դատարանի կողմից իրականացված արդարադատության իրավաչափության առումով:

9. Սահմանադրական դատարանը գտնում է, որ բացառված չեն այնպիսի իրավիճակները, երբ անհրաժեշտություն առաջանա կառուցակարգային եւ գործառնական նույնաբնույթ որեւէ ատյանի դատարանի դատավորի գործուղումը նույն ատյանի մեկ այլ դատարան՝ ողջամիտ ժամկետներում եւ արդյունավետ արդարադատություն իրականացնելու նպատակով: Ինչպես նշվեց, գործուղման ինստիտուտի գոյությունն ինքնին իրավաչափ է: Սակայն, մյուս կողմից, այդպիսի գործուղումները պետք է լինեն բացառություն եւ ոչ թե դառնան ընդհանուր կանոն կամ իրականացվեն գործառնական տարբեր իրավագործություն ունեցող դատարանների միջոց:

ՀՀ իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունից հետեւում է, որ միայն 2008թ. փետրվար-սեպտեմբեր ամիսներին Հարավային քրեական դատարան են գործուղվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների՝ 5, իսկ Հյուսիսային քրեական դատարան՝ 14 դատավոր: Վերջիններիս թիվն ավելի քան չորս անգամ գերազանցում է Հյուսիսային քրեական դատարանի դատավորների թիվը: Որպես կանոն, գործուղվել է երկուական դատավոր, եւ մասնագիտացված դատարանի մեկ դատավորի հետ ձեւավորվել է դատարան՝ դրան վերապահելով առանձնապես ծանր քրեական գործի քննության իրավասություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման վիճակի պատճառը նաեւ ոչ հիմնավոր մոտեցումն է Հյուսիսային եւ Հարավային քրեական դատարանների կազմավորմանը: Մի դեպքում՝ նախագահի եւ երեք դատավորի, մյուս դեպքում նախագահի եւ երկու դատավորի կազմով ստեղծված դատարանները փաստորեն ի սկզբանե ձեւական բնույթ են կրել: Օրինակ, Հարավային քրեական դատարանը՝ նախագահի եւ երկու դատավորի կազմով, միայն դատավորների օրինական արձակուրդի դեպքում գրեթե չորս ամիս չէր կարող դատական կազմ ձեւավորել՝ ՀՀ դատական օրենսգրքի 18 հոդվածի 3-րդ մասի հիմքով գործ քննելու համար: Իսկ այն դեպքում, երբ անհրաժեշտ է երեք դատավորի կազմով գործ քննել, ապա 4-5 ամիս անհնարին կլինի որեւէ այլ գործ քննել: Դա այն դեպքում, երբ 2008 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին այդ դատարանում մուտքագրվել է 202 գործ, իսկ 2007 թվականի նույն ժամանակահատվածում այդ դատարանի սպասարկման դատական տարածքում մուտքագրված է եղել 227 գործ:

Դատարանակազմական ոչ հիմնավոր լուծումների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ամեն մի կոնկրետ գործի համար վճարելի դատարանի նախագահը ձեւավորել է մասնագիտացված քրեական դա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տարան, որի կազմում մեծամասնություն են կազմել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորները՝ բացառապես հայեցողական ընտրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակը չի բխում իրավական պետության հիմնարար սկզբունքներից, իրավաչափ չէ ու նաեւ կոռուպցիոն ռիսկ է պարունակում:

10. Անդրադառնալով դատավորի գործուղման առկա իրավակարգավորումների շրջանակներում դատական պաշտպանության արդյունավետության ապահովվածությանը՝ դատավորների գործուղման գործընթացի իրավակարգավորման լիարժեքության տեսանկյունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատավորների գործուղման եւ դատարանների ձեւավորման իրավակարգավորումների խնդրին:

ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածն ամրագրել է դատավորների երկու կատեգորիա, որոնք կարող են գործուղվել այլ դատարան: Դրանք են. ա/ գործող դատավորը (14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասեր),  
բ/ ռեզերվային դատավորը (14 հոդվածի 4-րդ մաս՝ 7-րդ մասի համադրությամբ):

Կրճատված դատավորի վերաբերյալ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 6-րդ մասով նախատեսված է դրույթ, սակայն նախատեսված չէ նրա գործուղման հնարավորությունը:

ՀՀ դատական օրենսգրքի 14, 18, 24, 122, 129 հոդվածների համեմատական վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա/ արդարադատության արդյունավետ իրականացման առումով հիմնավոր չէ քրեական դատարանների նման կազմերով ձեւավորումը,

բ/ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերով սահմանված իրավակարգավորումը լիարժեք չէ այն իմաստով, որ.

- « ...նույն ատյանի դատավորը կարող է մինչեւ 6 ամիս ժամկետով գործուղվել այդ դատարան...» բառակապակցության մեջ հստակեցված չէ գործառնական առանձնահատկությանը վերաբերող պահանջը, որի հետեւանքով տեղ է գտել վերը ներկայացված իրավակիրառական պրակտիկան,

- չի նախատեսում որեւէ սահմանափակում, որպեսզի դա համատարած բնույթ չկրի,

- հստակ չէ «...իր հիմնական լիազորությունների իրականացման կասեցմամբ...» արտահայտությունը:

Վերջինս, փաստորեն, ենթադրում է դատավորի լիազորությունների ժա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մանակավոր դադարեցում, որը ՄԱԿ-ի 1985թ. Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքների համաձայն թույլատրելի է միայն իր գործունեության շարունակման անհնարինության կոնկրետ հիմքերի դեպքում:

11. ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Վճռաբեկ դատարանի նախագահը ապահովում է վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը»: Նույն հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն. «Վճռաբեկ դատարանի նախագահը իրականացնում է օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ»: Նշված երկու նորմերի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով վճռաբեկ դատարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով եւ, մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված՝ դատավորներին գործուղելու վերաբերյալ լիազորությունը չի բխում նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից:

Բացի դրանից, ՀՀ դատական օրենսգրքի 70 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը եւ Դատարանների նախագահների խորհուրդը հանդիսանում են դատական իշխանության ինքնակառավարման մարմիններ, որոնց ՀՀ դատական օրենսգրքի համապատասխանաբար՝ 71 եւ 72 հոդվածների 3-րդ մասերի 1-ին կետերով վերապահված է նաեւ դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկման իրավասություն: Դրանով հանդերձ, սահմանադրական դատարանը գտնում է, որ նշված նորմերում նույնպես «դատական իշխանության բնականոն գործունեության ապահովմանն առնչվող ցանկացած հարցի քննարկում» բառակապակցությունը չի կարող ենթադրել «ցանկացած հարցի լուծում», առավել եւս՝ այնպիսի հարցերի, որոնք ՀՀ Սահմանադրությամբ վերապահված են պետաիշխանական լիազորություններով օժտված այլ մարմինների իրավասությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 101 հոդվածի 6-րդ կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանը»

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1, 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակության շրջանակներում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի, 18 հոդվածի 1-ին մասի, 55 հոդվածի 11-րդ մասի եւ 95 հոդվածի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 5-րդ մասը:

3. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ դատական համակարգի հետագա բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների շրջանակներում նաեւ վեճի առարկա հիմնահարցերի վերաբերյալ նախապատրաստվում են օրենսդրական բարեփոխումներ, հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց, սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին եւ 2-րդ կետերով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 1-ը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**2 դեկտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 782**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**16 դեկտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Ջ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի սեպտեմբերի 15-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Դանիայի Թագավորության կառավարության միջեւ զարգացման համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(54)2010  
30

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 06.12.2008թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի սեպտեմբերի 15-ին՝ Երեւան քաղաքում: Համաձայնագրի նպատակն է ամրապնդել փոխադարձ զարգացման համագործակցության իրավական եւ կառուցվածքային համակարգը:

2. Համաձայնագրի համաձայն՝ դանիական կողմը հայկական կողմին տրամադրում է ֆինանսական աջակցություն, նյութական միջոցներ, տեխնիկական օժանդակություն եւ վերապատրաստման հնարավորություններ: Հայկական կողմն ապահովում է վերոնշյալ աջակցության եւ վերապատրաստման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը:

3. Համաձայնագրով սահմանված է, որ Ծրագրերն իրականացնող գործակալությունները (ԾԻԳ-երը) երկու պետությունների ընտրած պետական մարմին եւ պետական ու մասնավոր, ինչպես նաեւ ցանկացած պետական կամ մասնավոր կազմակերպություններ են:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ապահովել մյուս կողմի տրամադրած աջակցության եւ վերապատրաստման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը,
- անվճար եւ առանց անհիմն հետաձգումների ԾԻԳ-երին տրամադրել անհրաժեշտ բոլոր թույլտվությունները եւ լիազորությունները,
- ԾԻԳ-երին ազատել Հայաստանի Հանրապետությունում մատուցած իրենց ծառայությունների դիմաց ՀՀ-ից դուրս գտնվող հիմնադրամներից կամ այլ աղբյուրներից վճարվող վարձատրություններից զանձվող եկամտահարկից կամ այլ ուղղակի հարկերից ու վճարներից,
- ԾԻԳ-երին ազատել համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված եկամուտների մասին որեւէ հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունից,
- տրամադրել մյուս կողմի իրավասու մարմնի կողմից նշանակված աշխատակազմում ընդգրկված անձանց պաշտոնների ամբողջական անվանումը եւ անձնագիրը, համապատասխան կարգով սահմանել պաշտոններն զբաղեցնող անձանց պարտականությունները եւ մատուցվող ծառայությունները, ինչպես նաեւ թեկնածուի անհրաժեշտ եւ ցանկալի որակավորումները,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- աշխատակազմին տրամադրել գրասենյակային տարածք, փոխադրամիջոց, քարտուղարական ծառայություններ եւ անհրաժեշտ այլ հարմարություններ,
- ապահովել, որ օտարերկրյա աշխատակազմի անդամները եւ նրանց ամուսիններն ու խնամարկյալները լիովին պաշտպանված լինեն օրենքով, իսկ հետագայում ապահովել նաեւ, որ նրանք օգտվեն այն նույն արտոնություններից, որոնցից օգտվում են ՀՀ-ում նշանակված այլ երկրների կամ միջազգային կազմակերպությունների աշխատակիցները,
- ապահովել, որ աշխատակազմի օտարերկրյա աշխատակիցները, նրանց ամուսիններն ու խնամարկյալներն ազատվեն զինվորական ծառայությունից եւ զինվորական այլ պարտականություններից, իրավունք ունենան բացելու բանկային հաշիվներ, ազատվեն ՀՀ ներմուծվող արտաքին դրամական միջոցների նկատմամբ կիրառվող արժույթի կամ արտարժույթի փոխանակման սահմանափակումներից,
- աշխատակազմի օտարերկրյա աշխատակիցներին, նրանց ամուսիններին ու խնամարկյալներին ազատել եկամտահարկից կամ այլ ուղղակի հարկերից կամ վճարներից, բոլոր մաքսատուրքերից, տրամադրել մեկանգամյա /բազմակի/ մուտքի-ելքի անվճար արտոնագիր կամ բնակության, աշխատանքի թույլտվություն եւ անհրաժեշտ բոլոր թույլտվությունները,
- դանիական կողմին եւ նրա աշխատակազմին հատուցել ցանկացած կորուստ եւ ազատել ցանկացած պատասխանատվությունից, որն առաջանում է վերոնշյալ մեկ կամ մի քանի անձանց գործողությունների կամ բացթողումների հետեւանքով,
- անհրաժեշտության դեպքում ծանուցել դանիական կողմին մաքսագերծման հարցերով զբաղվող գործակալների կողմից մաքսագերծման համար պահանջվող փաստաթղթերի եւ Հայաստանում կիրառվող ներմուծման եւ մաքսագերծման ընթացակարգերի մասին,
- անհապաղ եւ անվճար հիմունքներով տրամադրել գույքի ներմուծման համար անհրաժեշտ արտոնագրեր եւ գույքի ներմուծման համար անհրաժեշտ այլ թույլտվություններ,
- գույքն ազատել Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու հետ կապված մաքսատուրքերից, հարկերից եւ նմանատիպ այլ վճարներից կամ ծախսերը կատարել իր հաշվին,
- ապահովել ներմուծված գույքի արագ եւ անվնաս ընդունումը, տնօրինումը, մաքսագերծումը, առաքումը, ինչպես նաեւ պահեստավորումը եւ հետագա փոխադրումը,



• ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցները եւ սկսել դատավարություն գույքի ցանկացած խմբաքանակի լրիվ կամ մասնակի կորստի կամ վնասի վերաբերյալ ներկայացված պահանջի դեպքում եւ անհապաղ ծանուցել դանիական կողմին:

5. Համաձայնագրի համաձայն՝ դանիական կողմը կատարում է ԾԻԳ-երի վճարները եւ ծախսերը՝ բացառությամբ այն ծախսերի, որոնք կրում է հայկական կողմը:

6. Սույն համաձայնագիրը սահմանում է նաեւ աշխատակազմի ձեւավորման, գույք եւ նյութական այլ միջոցներ ձեռք բերելու, կրթաթոշակներ սահմանելու, աշխատանքների գնահատման, կողմերի միջեւ վեճերի կարգավորման, համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ, ինչպես նաեւ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու եւ դադարելու կարգն ու պայմանները:

7. Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում Հանրապետության Նախագահի ներկայացուցչի հայտարարությունն այն մասին, որ ինքն առաջարկելու է Ազգային ժողովին սույն համաձայնագրի վավերացման ժամանակ քննության առնել համաձայնագրի 3 հոդվածի 16 ա կետի վերաբերյալ վերապահում անելու հարցը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի սեպտեմբերի 15-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Դանիայի Թագավորության կառավարության միջեւ զարգացման համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

16 դեկտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 783

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(54)2010  
33



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ  
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ  
ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**16 դեկտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Ջ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի հունիսի 6-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Չեխիայի Հանրապետության միջեւ եկամտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԿԱԳԻՐ ♦ 1(54)2010  
34

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

պետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 03.12.2008թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի հուլիսի 6-ին՝ Երեւան քաղաքում: Համաձայնագրի նպատակն է շահութահարկի, եկամտահարկի եւ գույքահարկի շրջանակում բացառել եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը եւ այդպիսով նվազեցնել եկամտային եւ գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առևտրի եւ ներդրումների վրա:

2. Համաձայնագիրը սահմանում է հարկման ենթակա գույքը եւ եկամուտների տեսակները, ինչպես նաեւ գույքի արժեքի հավելաճից գանձվող հարկերը, ձեռնարկությունների՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացած շահույթը, վճարվող շահաբաժիններն ու տոկոսները, ռոյալթին:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Չեխիայի Հանրապետությունում հարկվող եկամուտ ստանալիս երաշխավորել ՀՀ ռեզիդենտի եկամտահարկի եւ գույքահարկի նվազեցում Չեխիայի Հանրապետությունում վճարված համապատասխան հարկերին հավասար գումարի չափով,
- Չեխիայի Հանրապետության քաղաքացիներին եւ ոչ քաղաքացի ռեզիդենտներին չենթարկել ավելի ծանր հարկման, քան միեւնույն հանգամանքներում ենթարկվում են կամ կարող են ենթարկվել ՀՀ քաղաքացիները,
- Հայաստանի Հանրապետությունում երաշխավորել Չեխիայի Հանրապետության մշտական հաստատության ոչ պակաս բարենպաստ հարկում, քան համանման գործունեություն իրականացնող ՀՀ ձեռնարկությունների հարկումը,
- Չեխիայի ռեզիդենտին ՀՀ-ում վճարված տոկոսները, ռոյալթին եւ այլ վճարումները հարկվող շահույթի որոշման նպատակով նվազեցնել նույն պայմաններով, ինչպես Չեխիայի Հանրապետությունում ՀՀ ռեզիդենտին,
- Հայաստանի Հանրապետության այն ձեռնարկությունները, որոնց

**«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ»**

գույքն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է Չեխիայի Հանրապետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կամ անուղղակի կամ ուղղակի վերահսկվում է նրանց կողմից, առաջինը չենթարկել այլ կամ ավելի ծանր հարկման կամ պարտավորությունների կատարման, քան ՀՀ այլ համանման ձեռնարկությունները,

- ապահովել համաձայնագրի մասնակից պետությունների իրավասու մարմինների հետ անհրաժեշտ տեղեկությունների փոխանակում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ .**

1. 2008 թվականի հուլիսի 6-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Չեխիայի Հանրապետության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**16 դեկտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 784**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ (ԳՅՈՒՎԱԿԱՆ  
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԻ ԾՐԱԳԻՐ (ԼՐԱՑՈՒՑԻՉ) ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**16 դեկտեմբերի 2008թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի նոյեմբերի 18-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային պայմանագրում (Գյուղական ճանապարհների հատվածի ծրագիր (լրացուցիչ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է սահմանադրական դատարան:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի բացատրությունները, հետազոտելով պայմանագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց** .

1. Պայմանագրի նպատակն է 2007 թվականի նոյեմբերի 15-ին Գյուղական ճանապարհների հատվածի ծրագրի իրականացման համար կնքված պայմանագրով նախատեսված ծրագրի իրականացման գերաժախսի ֆինանսական լրացուցիչ վարկ ստանալը:

2. Պայմանագրով Ասիական զարգացման բանկը Հայաստանի Հանրապետությանն է տրամադրում տասնմեկ միլիոն երկու հարյուր մեկ հազար Փոխառության հատուկ իրավունքներին (ՓՀԻ 11.201.000) համարժեք գումար՝ տարբեր արտարժույթներով, 2007 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջև «Գյուղական ճանապարհահատվածի ծրագիր» վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի իրականացման գերաժախսի ֆինանսավորման նպատակով:

Պայմանագրի բաղկացուցիչ մասն են կազմում երկու հավելվածներ՝ «Ամորտիզացիոն ժամանակացույց» ու «Վարկային միջոցների բաշխում եւ մասհանում» վերտառություններով:

3. Վարկային պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

ա) Ասիական զարգացման բանկին վարկային տոկոսներ վճարել տարեկան մեկ (1%) տոկոս տոկոսադրույքով վարկի մարման արտոնյալ ժամանակահատվածում, եւ տարեկան մեկ եւ կես տոկոս (1.5%), որը ենթակա է հաշվարկման Վարկային հաշվից ստացված եւ Վարկի տարբեր ժամանակահատվածներում չմարված գումարների նկատմամբ.

բ) Վարկի տոկոսները եւ ցանկացած այլ վճարումները կատարել կիսամյակը մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին եւ օգոստոսի 1-ին.

գ) Վարկային հաշվից ստացված Վարկի հիմնական գումարը վճարել Վարկային պայմանագրի Հավելված 1-ում սահմանված ամորտիզացիոն ժամանակացույցի համաձայն.

դ) Վարկի հիմնական գումարի եւ տոկոսների վճարումը կատարել ԱՄՆ դոլարով՝ ըստ Վարկային կանոնակարգի 4.03 Բաժնի (ա) կետի եւ 4.04 Բաժնի.

ե) ապահովել վարկային միջոցների ուղղումը Ծրագրային ծախսերի ֆինանսավորմանը.

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- զ) կատարել պահանջվող ծախսերի 13.7 %-ի համաֆինանսավորում.
- է) վճարել ՀՀ տարածքում գանձվող հարկերն ու մաքսավճարները:

4. Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունը համահունչ է արտաքին քաղաքականության բնագավառում բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերություններ հաստատելու վերաբերյալ` ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2008 թվականի նոյեմբերի 18-ին Երեւանում ստորագրված` Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ վարկային պայմանագրում (Գյուղական ճանապարհների հատվածի ծրագիր (լրացուցիչ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**16 դեկտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 785**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 14 ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**23 դեկտեմբերի 2008թ.**

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԿԻՐ ♦ 1(54)2010

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչ Գ. Կուտոյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 68 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ սահմանադրական դատարանում 21.11.2008թ. մուտքագրված դիմումն է:



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ դատական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007թ. փետրվարի 21-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածը վերնագրված է. «Դատավորի անփոփոխելիությունը»: Հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Այն դեպքում, երբ տվյալ դատարանում գործը չի կարող քննվել դատավորների ինքնաբացարկները բավարարելու կամ այլ պատճառներով առաջացած դատավորների թվի անբավարարության հետեւանքով, վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դատավորը (նույն կամ վերադաս ատյանի) կարող է գործուղվել այդ դատարան», իսկ համապատասխանաբար 7-րդ մասը սահմանում է. «Եթե օրենքով նախատեսվում է դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացում, ապա համապատասխան դատավորները համարվում են ռեզերվային, իսկ նրանց կարգավիճակը, այդ թվում՝ աշխատավարձը եւ հավելավճարներ ստանալու իրավունքը, ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու կամ ընդգրկված մնալու իրավունքը պահպանվում են մինչեւ Սահմանադրությամբ սահմանված՝ դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալը, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ»:

2. Սկզբնապես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից վիճարկվել է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասերի սահմանադրականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. դեկտեմբերի 2-ի աշխատակարգային որոշմամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի, մերժել է ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի սահմանադրականությունը վիճարկելու մասով գործի քննության ընդունումը՝ նկատի ունենալով այդ նորմերի սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման առկայությունը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա գործը քննության է ընդունվել ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը որոշելու մասով:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

3. Վիճարկելով ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը՝ դիմող կողմը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ: ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ դատավորին նույն ատյանի կամ վերադաս ատյանի դատարան գործուղելու արդյունքում ստեղծված դատարանը չի կարող համարվել դատական մարմին, քանի որ ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի 2-րդ մասի համաձայն դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Մինչդեռ վճռաբեկ դատարանի նախագահի որոշման արդյունքում ձեւավորված դատարանը չի համապատասխանում «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» հասկացությանը: Բացի դրանից, վիճարկվող դրույթը, ըստ դիմողի, չի համապատասխանում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթը սահմանադրականության խնդիր չի առաջացնում: Ըստ պատասխանողի՝ ռեզերվային դատավորին գործուղելու վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը չի վերաբերում դատարանի կազմավորման կարգով նոր դատական կազմ ձեւավորելու կամ ուղղակի դատական մարմին ստեղծելու պահանջին: Վիճարկվող դրույթը վերաբերում է ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 11-րդ կետի և 95 հոդվածի պահանջներին համապատասխան օրենքի հիման վրա ստեղծված դատարանում ռեզերվային դատավորի ընդգրկմամբ դատական նոր կազմի ձեւավորմանը:

ՀՀ դատական օրենսգիրքը, սահմանելով վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունները, միեւնույն ժամանակ նախատեսում է նրա կողմից վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության ապահովման և օրենքով իրեն վերապահված այլ լիազորությունների իրականացման հնարավորություն: Իսկ նույն օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը՝ 7-րդ մաս-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

սի համադրությամբ, նախատեսում է ռեզերվային դատավորին գործուղելու մասին որոշում կայացնելու՝ վճռաբեկ դատարանի նախագահի իրավունքը: Ըստ պատասխանողի՝ դա նշանակում է, որ վճռաբեկ դատարանի նախագահը կարող է կայացնել այդպիսի որոշում միայն օրենքով նախատեսված հիմքերի եւ պայմանների առկայության պարագայում:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին՝ վիճարկվող դրույթի՝ դիմողի մատնանշած հակասության առնչությամբ պատասխանողը նշում է, որ սահմանադրական դատարանն իր 2008թ. դեկտեմբերի 2-ի ՍԳՈ-782 որոշմամբ արդարացիորեն իրավաչափ է համարել գործուղման հիման վրա ձեւավորված դատական կազմի միջոցով գործի քննությունը՝ դատավորի գործուղման ինստիտուտի առկայությունը պայմանավորելով հենց անձի դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների ապահովման անհրաժեշտությամբ:

5. ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածն ամրագրել է դատավորների երկու կատեգորիա, որոնք կարող են վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործուղվել այլ դատարան: Դրանք են.

ա/ գործող դատավորը (14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասեր),

բ/ ռեզերվային դատավորը (14 հոդվածի 4-րդ մաս՝ 7-րդ մասի համադրությամբ):

Սահմանադրական դատարանը գործող դատավորների գործուղման իրավակարգավորումը սահմանող՝ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ եւ 5-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը լուծել է սահմանադրական դատարանի 2008թ. դեկտեմբերի 2-ի ՍԳՈ-782 որոշմամբ՝ այդ դրույթները ճանաչելով ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասին, 18 հոդվածի 1-ին մասին, 55 հոդվածի 11-րդ մասին եւ 95 հոդվածին հակասող եւ անվավեր: Այդ որոշման մեջ, անդրադառնալով դատավորի գործուղման իրավաչափությանը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով սահմանված՝ դատավորի գործուղման իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ դատական ծանրաբեռնվածության հաղթահարումը՝ ողջամիտ ժամկետում գործերի քննության համար, ինչը, իր հերթին, նպատակաուղղված է դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների արդյունավետ իրացման ապահովմանը: Դատավորի գործուղման հնարավորության նախատեսումն ինքնին իրավաչափ է, պայմանավորված է բացառիկ դեպքերում, իրավականորեն արդարացված՝ տվյալ դատարանում դատավորնե-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

րի թվի օբյեկտիվորեն առաջացած անբավարարության հետեւանքով գործի քննության անհնարինության հետեւանքների հաղթահարման անհրաժեշտությամբ:

Նշված որոշման մեջ սահմանադրական դատարանը միաժամանակ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դատավորների գործուղումները պետք է լինեն բացառություն եւ ոչ թե դառնան ընդհանուր կանոն: Ըստ դիմողի՝ դրանք նաեւ պետք է իրականացվեն այն կարգով, որ բացառվի սահմանված կարգից դուրս՝ բացառիկ բնույթ ունեցող դատարան ձեւավորելը:

Սահմանադրական դատարանն իր նշված որոշման մեջ նաեւ նշել է, որ ՀՀ դատական օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի ուժով օրենքով վճռաբեկ դատարանի նախագահին կարող են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք իրենց բնույթով չեն հակասում օրենքով եւ, մասնավորապես, օրենսգրքի 61 հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված մյուս լիազորություններին: Սահմանադրական դատարանը գտել է նաեւ, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածով վճռաբեկ դատարանի նախագահին վերապահված՝ դատավորներին գործուղելու վերաբերյալ լիազորությունը չի բխում նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից:

6. Դատական օրենսգրքի 14 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ռեզերվային դատավորների ինստիտուտը ձեւավորվում է դատարանների կամ վճռաբեկ դատարանի պալատների վերացման արդյունքում: Ռեզերվային դատավորների կարգավիճակը պահպանվում է մինչեւ Սահմանադրությամբ սահմանված՝ դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալը: Նման իրավակարգավորումը բխում է ՀՀ Սահմանադրության 96 հոդվածում ամրագրված՝ դատավորների անփոփոխելիության սկզբունքից եւ իրավական երաշխիք է այդ սկզբունքի իրացումն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ ՀՀ դատական օրենսգրքի 14 հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրճատված դատավորները, թեւ ունեն նույն կարգավիճակը, ինչ դատարանի կամ պալատի վերացման արդյունքում ձեւավորված ռեզերվային դատավորները, սակայն, ըստ նույն հոդվածի 7-րդ մասի՝ ռեզերվային դատավորներ չեն համարվում, ենթակա չեն գործուղման եւ, հետեւաբար՝ ստեղծված չեն արդարադատության իրականացմանը նրանց մասնակցությունն ապահովող մեխանիզմներ:

Դատական օրենսգրքի 14 հոդվածի վիճարկվող դրույթը՝ սահմանելով ռեզերվային դատավորին գործուղելու դեպքերը, միաժամանակ որպես ռեզերվային դատավորների գործուղման միակ չափանիշ սահմանում է

գործուղվող դատավորի՝ նույն ատյանի կամ վերադաս ատյանի դատավոր լինելու պահանջը: Նման պահանջն առաջին հերթին հնարավորություն է ընձեռում գործուղման դեպքում ապահովել գործի քննությունը համապատասխան ատյանի դատավորի որակավորում ունեցող դատավորի կողմից:

7. Հիմք ընդունելով այն եզրահանգումը, որ ինչպես գործուղման հնարավորության սահմանումը՝ ընդհանրապես, այնպես էլ ռեզերվային դատավորների գործուղման հնարավորության սահմանումը՝ մասնավորապես, ինքնին իրավաչափ են, միաժամանակ հաշվի առնելով, որ ռեզերվային դատավորների գործուղման կապակցությամբ իրավակիրառական պրակտիկա դեռևս ձեւավորված չէ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ռեզերվային դատավորների գործուղման իրավաչափությունն իրավակիրառական պրակտիկայում կարող է ապահովվել միայն այն դեպքում, երբ գործուղման գործընթացն իրականացվի ինչպես վերոհիշյալ, այնպես էլ սահմանադրական դատարանի ՍԳՈ-782 որոշման մեջ նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

23 դեկտեմբերի 2008 թվականի  
ՍԳՈ- 786



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 8 ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**3 փետրվարի 2009թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող՝ քաղաքացի Սուսաննա Հովսեփյանի ներկայացուցիչներ Ա. Կիվիրյանի, Դ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոնյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի եւ 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Սուսաննա Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը քաղաքացի Սուսաննա Հովսեփյանի՝ ՀՀ սահմանադրական դատարանում 26.11.2008թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողի գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Ց .**

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը ներառված է օրենսգրքի «Գործերի ընդդատությունը» վերտառությամբ 3-րդ գլխում եւ վերնագրված է «Գործերի առարկայական ընդդատությունը»: Հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջեւ այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների, գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

4) վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից»:

2. Ըստ գործում առկա դատական ակտերի՝ դիմողը, նախ՝ 23.06.2008թ. դիմել է ՀՀ Երեսնի քաղաքացիական դատարան՝ ներկայացնելով չորս հայցապահանջ.

- Երեսնի քաղաքապետի՝ հողամասն աճուրդով վաճառելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին,

- Երեսնի քաղաքապետի եւ Դ. Ավագյանի միջեւ 30.12.2005թ. կնքված Հ 874/5-ԱԳ հողամասի առուվաճառքի պայմանագիրը մասնակի անվավեր ճանաչելու մասին,

- Երեսնի քաղաքապետին վիճելի հողատարածքն ուղղակի վաճառքի ձեռով Ս. Հովսեփյանին օտարելուն պարտավորեցնելու մասին,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- 30.12.2005թ. կնքված Հ 874/5-ԱԳ հողամասի առուվաճառքի պայմանագրի հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Նոր Նորքի տարածքային ստորաբաժանման կողմից Դ. Ավագյանի սեփականության իրավունքի՝ 25.01.2006թ. կատարված գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու մասին:

Երեւանի քաղաքացիական դատարանն իր՝ 25.06.2008թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի հիմքով, այն պատճառաբանությամբ, որ 1-ին, 3-րդ եւ 4-րդ հայցապահանջներն ընդդատյա են ՀՀ վարչական դատարանին: Այդ որոշմամբ դատարանը չի անդրադարձել հայցվորի 2-րդ հայցապահանջին, նշված հայցապահանջի վերաբերյալ որոշում չի կայացրել եւ չի պարզել այն հանգամանքը, թե որ դատարանին է ընդդատյա նշված հայցապահանջը:

Այնուհետեւ Ս. Հովսեփյանը 28.06.2008թ. դիմել է ՀՀ վարչական դատարան՝ ներկայացնելով վերոնշյալ չորս հայցապահանջները: Վարչական դատարանն իր՝ 03.07.2008թ. որոշմամբ, ի տարբերություն Երեւանի քաղաքացիական դատարանի, անդրադարձել է հայցվորի բոլոր չորս հայցապահանջներին եւ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի հիմքով, դրանցից երեքի մասով հայցադիմումն ընդունել է վարույթ՝ գտնելով, որ նշված հայցապահանջների հիման վրա գործը ծագում է հանրային իրավահարաբերություններից: Ինչ վերաբերում է վերոնշյալ 2-րդ հայցապահանջին, ապա ՀՀ վարչական դատարանի վերոհիշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն նշված հայցապահանջն «ընդդատյա է Երեւանի քաղաքացիական դատարանին»: Վարչական դատարանն իր նշված որոշման դեմ դիմողի կողմից բերված բողոքի քննության արդյունքում իր՝ 18.07.2008թ. որոշման մեջ, անդրադառնալով առարկայական ընդդատության հարցին, արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Առուվաճառքի պայմանագրերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով, հետեւաբար դրանք քաղաքացիաիրավական հարաբերություններ են եւ չեն կարող դիտվել որպէս հանրային իրավահարաբերություններից ծագող հարաբերություններ: Նշված իրավահարաբերություններում վարչական մարմնի հանդէս գալը չի նշանակում, որ դրանք ստանում են հանրային-իրավական բնույթ, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը Հայաստանի Հանրապետությանը եւ համայնքներին իրավունք է վերապահում քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով մտնել քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների մեջ: Իսկ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում են ընդհանուր իրավասության դատարանները, բացառությամբ քաղաքացիական դատարանների քննությանը ընդդատյա գործերի»:

Վարչական դատարանը նույն որոշման մեջ, անդրադառնալով իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտման հարցին, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 94 եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածների դրույթները, արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Վարչական դատարանի կողմից քաղաքացիաիրավական կամ այլ իրավահարաբերություններից ծագող գործերի վարույթ ընդունելու դեպքում կխախտվի գործերի առարկայական ընդդատության սկզբունքը եւ այդպիսով դատարանը կզերազանցի իր լիազորությունները, հետեւաբար, անկախ գործերի միմյանց հետ փոխկապակցված լինելու հանգամանքից, վարչական դատարանը լիազորված չէ իրեն ոչ ընդդատյա գործը ընդունել վարույթ: ... վարչական դատարանին ընդդատյա չլինելու մասով հայցադիմումի ընդունումը մերժելը չի խախտում հայցվորի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, քանի որ հայցվորին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով իրավունք է տրված իր խախտված իրավունքները վերականգնել քաղաքացիական դատավարության կարգով»:

Դիմողն այնուհետեւ դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր՝ 25.09.2008թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է, գտնելով, որ գործը վարույթ ընդունելու հիմքերը բացակայում են:

3. Դիմողը 26.11.2008թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ գտնելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածի 1-ին մասի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերին, քանի որ տարբեր դատարաններին ընդդատյա, սակայն միմյանց հետ փոխկապակցված գործերի՝ տարբեր դատարաններում քննության ժամանակ չի ապահովվում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասով եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13 հոդվածով սահմանված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասով եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետով սահմանված՝ գործի քննության ողջամիտ ժամկետի սկզբունքի պահպանումը եւ դրանց համակցությամբ՝ խախտվում են ՀՀ Սահմանադրության 3 հոդվածով սահմանված սկզբունքները, ինչպես նաեւ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազա-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան ապահովելու՝ պետության պարտականության վերաբերյալ սահմանադրական դրույթը:

4. Պատասխանողը գտնում է, որ ներկայացված անհատական դիմումն ակնհայտ անհիմն է՝ այն պատճառաբանությամբ, որ քաղաքացու կողմից ըստ էության վիճարկվում են ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածի դրույթները, այլ որոշակի կոնկրետ դրույթի բացակայությունը, որը հնարավորություն կտար վարչական դատարանին վարույթ ընդունել տարբեր դատարաններին ընդդատյա եւ միմյանց հետ կապված մի քանի պահանջներով հայցադիմում: Սահմանադրական դատարան քաղաքացու դիմում ներկայացնելու իրավունքը կայանում է նրանում, որպեսզի վերջինս պաշտպանի իր՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները, մինչդեռ ըստ պատասխանողի՝ վարչական դատարանում գործերի առարկայական ընդդատությունը սահմանող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասն ուղղակիորեն կապված չէ դիմողի կողմից ներկայացված պահանջի հետ, դիմողն իր դիմումում բառ անգամ չի ասում վիճարկվող նորմի բովանդակության հակասահմանադրականության մասին: Ավելին, անգամ վիճարկվող հոդվածը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչվելու դեպքում դիմողն իր պահանջի բավարարում չի ստանա:

Պատասխանողը գտնում է, որ դիմողի կողմից սխալ է ձեւակերպված նաեւ պահանջի առարկան: Մասնավորապես, միմյանց հետ կապված մի քանի պահանջների առարկայական ընդդատությունը սահմանող իրավադրույթը չէր կարող ամրագրված լինել Վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասում: Վիճարկվող դրույթը սահմանում է վարչական դատարանի առարկայական ընդդատության ընդհանուր կանոնը, մինչդեռ դրանից բացառությունները եւ մասնավոր դրսեւորումները, այդ թվում՝ միմյանց հետ կապված մի քանի պահանջների առարկայական ընդդատությունը, պետք է սահմանվի միեւնույն հոդվածի մեկ այլ մասով կամ նոր հոդվածով: Հարցն այդ կերպ է կարգավորված, օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ՀՀ քաղ. դատ. օր., Գլուխ 2):

5. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմողը բարձրացնում է տարբեր բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններից ծագող վեճերի դեպքում տարբեր դատավարական օրենսգրքերի համաժամանակյա գործողության համատեքստում դատական պաշտպանության միջոցի արդյունավետության հարցը, սահմանադ-

րական դատարանը կարելի է տարբեր դատավարական օրենսգրքերի համադրված վերլուծության անհրաժեշտությունը: ՀՀ վարչական դատարանն իր՝ 18.07.2008թ. «Բողոքը մերժելու մասին» որոշման մեջ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի համատեքստում անդրադառնալով գործի քննության արագության սկզբունքների խախտման, ինչպես նաև անհարկի ձգձգումներ եւ քաշքշուկներ առաջանալու հարցին, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 94 եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածների դրույթները, գտել է, որ «...վարչական դատարանին ընդդատյա չլինելու մասով հայցադիմումի ընդունումը մերժելը չի խախտում հայցվորի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, քանի որ հայցվորին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով իրավունք է տրված իր խախտված իրավունքները վերականգնել քաղաքացիական դատավարության կարգով»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը: Ինչպես ՀՀ քաղաքացիական եւ քրեական դատավարության օրենսգրքերը, այնպես էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանում են գործերի առարկայական ընդդատության իրենց կանոնները: Վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածով օրենսդիրը սահմանում է վարչական դատարանին գործերի առարկայական ընդդատության ընդհանուր շրջանակը:

Վիճարկվող հոդվածի 2-րդ մասը վարչական դատարանին ընդդատյա գործերի շրջանակից բացառում է այն գործերը, որոնք ընդդատյա են այլ դատարանների:

Սահմանադրական դատարանը՝ գտնելով, որ վարչական գործերի առարկայական ընդդատության՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածով սահմանված կանոնները՝ իրենց իրավակարգավորման շրջանակներում, ինքնին իրավաչափ են եւ համահունչ մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտի բովանդակությանը, միաժամանակ, հաշվի առնելով դիմողի կողմից բարձրացված իրավական հիմնախնդիրը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասին համապատասխան հարկ է համարում անդրադառնալ օրենքի հնարավոր բացի եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործերի ընդդատությունը» վերտառությամբ 3-րդ գլխով (կազմված է մեկ՝ 8 հոդվածից) սահմանված իրավակարգավորման սահմանադրականության հարցին:

6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախկին խմբագրությամբ 15 հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի վերլուծությունից բխում է, որ վարչաիրավական եւ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող տարբեր, սակայն միմյանց հետ փոխկապակցված իրավահարաբերություններից ծագող գործերն օրենսդիրը դիտարկում էր որպես մեկ գործ, որը ենթակա էր քննության միեւնույն դատարանի կողմից, եւ որի ընթացքում դատարանին դատավարական հնարավորություն էր ընձեռվում հիմնական հայցապահանջը բավարարելիս, այն է՝ վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունից ծագող վեճը հայցվորի օգտին լուծելիս անդրադառնալ նաեւ հիմնական հայցապահանջի իրավական հետեւանքները վերացնելու հարցին, այսինքն՝ վարչաիրավական հարաբերության հետ փոխկապակցված քաղաքացիաիրավական հարաբերությունից կամ, ընդհակառակն, քաղաքացիաիրավական հարաբերության հետ փոխկապակցված վարչաիրավական հարաբերությունից ծագող վեճի ողջամիտ ժամկետում ամբողջական լուծմանը: Այդպիսին է եղել նաեւ դատական պրակտիկան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ո՛չ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, ո՛չ էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չեն սահմանում տարբեր, մասնավորապես, վարչաիրավական եւ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների ընդդատության կանոնները, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունմամբ առաջացել է մի իրավիճակ, երբ դատական պաշտպանության իրավունքն իրականացվում է միաժամանակ տարբեր դատական մարմիններում եւ որի ընթացքում գործում են երկու տարբեր դատավարական օրենսգրքեր: Այսինքն, ի տարբերություն նախորդ իրավակարգավորումների, ներկա իրավակարգավորումների պարագայում վարչաիրավական եւ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններից ծագող գործն օրենսդիրն արդեն դիտարկում է որպես առնվազն երկու գործ, որոնք ենթակա են քննության տարբեր դատարանների կողմից, եւ որի ընթացքում համապատասխան դատարաններին այլեւս դատավարական հնարավորություն չի ընձեռվում հայցապահանջը բավարարելիս, այն է՝ վարչաիրավական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունից ծագող վեճը հայցվորի օգտին լուծելիս անդրադառնալ նաեւ տվյալ հայցապահանջի իրավական հետեւանքների վերացման հարցին, այսինքն՝ վարչաիրավական հարաբերության հետ փոխկապակցված քաղաքացիաիրավական հարաբերությունից կամ, ընդհակառակն, քաղաքացիաիրավական հարաբերության հետ փոխկապակցված վարչաիրավական հարաբերությունից ծագող վեճի լուծմանը:

7. Ինչպես նշվեց, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն (ինչպես նաև ՀՀ դատավարական մյուս օրենսգրքերը) ունի գործերի առարկայական ընդդատության իր կանոնները: Սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների առկայության հնարավորությունը հաշվի չառնելը եւ նշված իրավահարաբերություններից ծագող գործերը մեկ դատարանում քննելու հանգամանքի բացակայությունը գործնականում բացասաբար են անդրադառնում իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության վրա: Նշված իրավիճակը հնարավոր է շտկել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածում կամ 3-րդ գլխում համապատասխան փոփոխություններ կատարելով, որը կնախատեսի հանրային-իրավական եւ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերություններից ծագող գործերը մեկ դատարանում քննելու հնարավորությունը՝ հիմնական իրավահարաբերությունից ծագող պահանջի ընդդատության սկզբունքի գերակայության ապահովմամբ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վարչաիրավական եւ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող, սակայն միմյանց հետ փոխկապակցված հարաբերությունների առկայության հնարավորությունը հաշվի չառնելու համատեքստում այդ թերությունն առկա է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որի սահմանադրականության հարցի լուծումը սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանի իրավասությունը չէ, ուստի անհրաժեշտ է Ազգային ժողովի ուշադրությունը հրավիրել օրենսգրքի նշված բացի լրացման անհրաժեշտության վրա:

8. ՀՀ Սահմանադրության 19 հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածը սահմանում են անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները: Վերջիններս իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը:

Խնդրո առարկա իրավակարգավորումը՝ անձի դատական պաշտպանության արդյունավետության ապահովման եւ դատավարական սահմանադրական ու օրենսդրական երաշխիքների պահպանման տեսանկյունից գնահատելու նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել ՀՀ Սահմանադրության 19 հոդվածում «... իր խախտված իրավունքները վերականգնելու համար ... իր գործի ... քննության իրավունք» ձեւակերպման սահմանադրաիրավական բովանդակությունը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Նշված սահմանադրական դրույթում «իր խախտված իրավունքները վերականգնելու» եւ «իր գործի» ձեւակերպումների համադրված վերլուծությունը վկայում է, որ «իր գործի քննություն» հասկացությունը ներառում է բոլոր այն փոխկապակցված հայցապահանջների համակցված քննությունը, որոնք նպատակաուղղված են մեկ ընդհանուր խնդրի լուծմանը, այն է՝ այդ գործի շրջանակներում անձի խախտված իրավունքի վերականգնմանը:

Վերոնշյալը նշանակում է, որ ինչպես ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով, այնպես էլ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով եւ ներպետական դատավարական օրենսդրությամբ սահմանված երաշխիքները պետք է ապահովվեն ոչ միայն այս կամ այն կոնկրետ հայցապահանջի քննության շրջանակում եւ համատեքստում, այլ նաեւ տվյալ խախտված իրավունքի վերականգնմանը միտված՝ տարաբնույթ փոխկապակցված հայցապահանջների քննության շրջանակում եւ համատեքստում, քանզի այդ հայցապահանջների վերջնական նպատակը մեկն է՝ միեւնույն խախտված իրավունքի ամբողջական վերականգնումը: Հետեւաբար, անձի միեւնույն խախտված իրավունքի վերականգնմանն ուղղված փոխկապակցված հայցապահանջների դիտարկումը որպես միմյանցից տարանջատված առանձին եւ ինքնուրույն գործերի հարուցման հիմքեր, կարող է հանգեցնել անձի գործի արդյունավետ, ամբողջական եւ բազմակողմանի քննության ապահովման դատավարական երաշխիքների խախտման:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ամանցյալ իրավահարաբերությունից ծագող, այսինքն՝ հիմնական իրավահարաբերության իրավական հետեւանքների վերացմանն ուղղված պահանջը դատարան առանձին ներկայացնելու դեպքում դատարանը գործնականում զրկվում է տվյալ գործի վերաբերյալ արդարացի որոշում կայացնելու հնարավորությունից, խախտվում է անձի արդար դատաքննության իրավունքը, քանի որ արդար որոշում կայացնելու համար դատարանն ստիպված է իրականացնել գործի հանգամանքների լիարժեք, օբյեկտիվ եւ բազմակողմանի ուսումնասիրություն, իսկ այդպիսի ուսումնասիրության համար դատարանը պետք է անդրադառնա հիմնական իրավահարաբերությանը, սակայն գործող իրավակարգավորումը դա թույլ չի տալիս, քանի որ տվյալ իրավահարաբերությունից ծագող գործն ընդդատյա է ոչ թե տվյալ դատարանին, այլ մեկ այլ դատարանի: Սահմանադրական դատարանը նման իրավակարգավորումը համարում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ դատարանի կողմից գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման հիմք եւ դատական պաշտպանության ոչ արդյունավետ միջոց:

9. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6 հոդվածն ամրագրում է վարչական դատարանի կողմից գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը: Վերջինիս տրամաբանությունը կայանում է նրանում, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վարչաիրավական հարաբերություններից ծագող վեճում քաղաքացին հանդես է գալիս ընդդեմ վարչական մարմնի, քաղաքացու համար պետք է ստեղծվի որոշակի բարենպաստ վիճակ: Վերջինս ենթադրում է, որ վարչաիրավահարաբերություններից ծագող վեճի կարգավորման գործընթացում քաղաքացին չպետք է ծանրաբեռնվի անհամաչափ պարտավորություններով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա իրավակարգավորումը ոչ միայն թույլ չի տալիս ապահովել արդյունավետ դատական պաշտպանության իրացումը, այլ նաեւ հայցվորին ծանրաբեռնում է անհամաչափ պարտավորությամբ: Վերջինս դրսեւորվում է նրանում, որ, բացառելով վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ներկա իրավակարգավորումը պարտավորեցնում է, որպեսզի քաղաքացին, իր հիմնական պահանջին վերաբերող դատական ակտի առկայության պարագայում, որը կանխորոշում է հետեւանք ներկայացնող պահանջների լուծումը, պարտադրված ձեռով դիմի տարբեր դատարաններ, ինչը դժվարացնում է նրա իրավունքների պաշտպանության գործընթացը:

Բացի դրանից, նման իրավակարգավորումը կարող է ավելորդ ծանրաբեռնվածություն ստեղծել նաեւ դատարանների համար:

10. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քննության առարկա հարցի առնչությամբ տեղ է գտել հակասական իրավակիրառական պրակտիկա: Մասնավորապես, ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2008թ. փետրվարի 11-ի թիվ 113 որոշման 5-րդ կետով ամրագրվել է, որ «այն դեպքերում, երբ դատարան ներկայացված հայցադիմումն իր մեջ պարունակում է քաղաքացիական, ընդհանուր իրավասության եւ վարչական դատարանների առարկայական ընդդատության ենթակա մի քանի պահանջներ, ապա քաղաքացիական գործեր քննող դատարանը հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին) որոշում է կայացնում հայցադիմումը վերադարձնելու մասին, որում պարզաբանում է, թե պահանջի որ մասն է իրեն ընդդատյա եւ որը՝ ոչ:

Վարչական դատարանում քաղաքացիական եւ վարչական դատարանների առարկայական ընդդատության ենթակա մի քանի պահանջներ պարունակող հայցադիմում ստանալու դեպքում դատարանը հայցադիմումն ընդունում է միայն վարչական դատարանին ընդդատյա մասով: Մնացած

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մասով հայցադիմումի ընդունումը մերժվում է՝ հիմք ընդունելով Վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման մեջ դատարանը պարզաբանում է, թե պահանջը որ դատարանին է ընդդատյա»:

Ներկայումս գործում է այլ պրակտիկա: ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը, ի փոփոխումն 2008թ. փետրվարի 11-ի թիվ 113 որոշման, 2008թ. դեկտեմբերի 22-ին ընդունել է թիվ 123 որոշումը, որում մասնավորապես նախատեսված է, որ. «այն դեպքերում, երբ դատարան է ներկայացվել հայցադիմում, որը վերաբերում է տարբեր դատարաններին ընդդատյա (քաղաքացիական, ընդհանուր իրավասության եւ վարչական դատարանների առարկայական ընդդատություն) միմյանց հետ կապված մի քանի պահանջներով վեճին, ապա գործը քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը:

Հիմնական է համարվում այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է հետեւանք ներկայացնող պահանջների լուծման ելքը»:

Ելնելով գործի քննության արդյունքներից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից ածանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**3 փետրվարի 2009 թվականի  
ՍԳՈ- 787**



**Հ Ա Տ ՈՒ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք**

**Քաղաքացի Սուսաննա Հովսեփյանի դիմումի հիման վրա՝  
Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության  
օրենսգրքի 8 հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության  
Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու  
վերաբերյալ գործով՝ ՀՀ սահմանադրական դատարանի  
3 փետրվարի 2009թ. ՍԳՈ-787 որոշման կապակցությամբ**

ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԳՈ-787 որոշման վերաբերյալ ունեն հետևյալ առարկությունները.

1. ՀՀ սահմանադրական դատարանի առջևի դիմումատուի բարձրացրած հարցի իրավական էությունը (անկախ նրա կողմից բերված փաստարկներից ու հիմնավորումներից) ելնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 եւ 69 հոդվածների պահանջներից, հանգում է հետևյալին. հակասահմանադրական ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8 հոդվածի 1-ին մասում ամրագրված հետևյալ դրույթները, այն է.

- վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, այդ թվում՝

ա/ հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված վեճերը.

բ/ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

գ/ հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, այդ թվում՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը.

դ/ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ այն գործերը, որոնք բխում են հանրային իրավահարաբերություններից:

Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում գլխավորապես պետք է տրվեին վերը թվարկված վիճարկելի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու կամ համապատասխանելու վերաբերյալ հարցերի ամբողջական վերլուծություններ, հիմնավորումներ, եզրահանգումներ եւ պատասխաններ, ինչը բխում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64 հոդվածի պահանջներից, եւ մասնավորապես. արդյո՞ք սահմանադրական է հանրային իրավահարաբերություններից ծագող վերը նշված գործերը վարչական դատարանում քննելու լիազորություն:

նը՝ առաջնահերթ անդրադառնալով նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի թվով 6 պահանջներին:

Ինչպես, իմ կարծիքով, արդարացիորեն նշում է պատասխանողը, դիմումատուի հարցադրումը հանգում է ոչ թե վերոհիշյալ օրենսգրքի 8 հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցին, այլ՝ «տարբեր դատարաններին ընդդատյա եւ միմյանց հետ կապված մի քանի պահանջներով» վարչական դատարան հայցադիմում ներկայացնելու իրավական (դատավարական) հնարավորության բացակայության սահմանադրականությանը:

Չանտեսելով ընդդատության խնդրի ամբողջական (ինստիտուցիոնալ) լուծման կարելիությունը, որը երաշխիք է նաեւ ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներով նախատեսված անձի իրավունքների առավել արդյունավետ իրականացման եւ պաշտպանության, այնուհանդերձ կարծում եմ, որ սահմանադրական դատարանն իր որոշմամբ հանգել է ոչ ընդունելի այնպիսի հետեւության, համաձայն որի. տարբեր իրավահարաբերություններից ծագող (տվյալ դեպքում՝ հանրային-իրավական եւ քաղաքացիաիրավական) գործեր մեկ դատարանում քննելու հնարավորության բացակայությունը հանգեցնում է անձի իրավունքների անարդյունավետ պաշտպանությանը (որոշման 6-րդ, 7-րդ, 8-րդ կետեր), հետեւաբար խնդրի լուծումը դիտարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածում (կամ՝ օրենսգրքի 3-րդ գլխում) (տե՛ս որոշման 7-րդ կետը)՝ այն ճանաչվելով Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Բացի այն, որ իմ կարծիքով սահմանադրական դատարանը պետք է զերծ լինի օրինաստեղծ գործունեությունը կրկնօրինակող մոտեցումներից, այնուհանդերձ, ՍԴՈ-787 որոշմամբ հաստատագրված՝ մեկ դատարանում տարբեր իրավահարաբերություններից ծագող գործերի քննության սկզբունքի անվերապահ ներդրումն անխուսափելիորեն կհանգեցնի արդարադատական գործառույթի գործառնական տարանջատման (արդարադատության մասնագիտացման)՝ ՀՀ Սահմանադրության 92, 93 եւ 94 հոդվածներից բխող սկզբունքի խախտմանը, հետեւաբար նաեւ՝ ընդդատության գաղափարի մերժմանը: Փաստորեն առաջ է քաշվում արդարադատական գործառույթի մասնագիտացման ներհամակարգային միասնականացման անհրաժեշտության խնդիր՝ որպես ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներով նախատեսված անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովող միջոց:

Սույն գործի շրջանակներում ընդդատության ինստիտուտի օրենսդրական առավել հանգամանալի կարգավորման խնդրի ծագումը թերեւս պայմանավորված է նաեւ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրմամբ (2008թ. հունվարի 1-ից), որն իմ կարծիքով պետք է ուղեկցվեր ինստիտուցիոնալ լիազորությունների առավել ամբողջական հստակեց-

ման՝ սահմանադրական կարգի սկզբունքներին համապատասխան լուծումներով, որոնց սահմանադրական դատարանն անդրադարձել է իր՝ ՍԳՈ-780 որոշմամբ՝ իրավացիորեն խնդրի լուծումը դիտարկելով ՀՀ Ազգային ժողովի լիազորության շրջանակում:

Օրինաստեղծ գործունեության արդյունքում կարող են գտնվել դատական մի գործի շրջանակներում տարբեր իրավահարաբերություններից ծագող վեճերի լուծման առավել ողջամիտ ընթացակարգեր, որոնց հիմքում դրվի տարբեր իրավազորության դատարանների համագործակցության սկզբունքը (օրինակ, մի գործի շրջանակներում այլ իրավահարաբերությունից ծագող վեճի նյութերը շահագրգիռ անձանց համաձայնությամբ տվյալ դատարանի կողմից իրավասու այլ դատարան արագացված կարգով փոխանցելը եւ այլն), որը կծառայի ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներով ամրագրված անձի իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանը:

2. Անդրադառնալով իրավակիրառական պրակտիկային, ՍԳՈ-787 որոշմամբ հանգամանալի վերլուծության չենթարկվեց առարկայական ընդդատության ինստիտուտի կիրառման ոչ իրավաչափ դրսեւորումները, մասնավորապես՝ փաստելով քննության առարկա հարցի առնչությամբ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2008 թվականին ընդունված իրարամերժ որոշումները, չկարեւորվեց ՀՀ վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառությունը ապահովելու սահմանադրական գործառույթի անվերապահ իրականացման անհրաժեշտությունը՝ սույն գործով առաջացած վիճելի իրավահարաբերության կարգավորման, հետեւաբար նաեւ ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածներով նախատեսված անձի իրավունքների արդյունավետ պաշտպանություն ապահովելու խնդրում (ՀՀ վճռաբեկ դատարանն իր 25.09.2008թ. որոշմամբ սույն գործով դիմող կողմի վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ համարելով դիմումատուի բարձրացրած հարցը ոչ էական՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար), քանի որ համոզիչ չէ նաեւ՝ անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմաններին եւ կարգին վերաբերող, հետեւաբար՝ օրենքով կարգավորման ենթակա հարաբերությունների (ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 1-ին կետ) կանոնակարգումը Գատարանների նախագահների խորհրդի կողմից (ՀՀ դատական օրենսգրքի 72 հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերի դրույթների մեկնաբանմամբ): Իրարամերժ որոշումներ կայացնելու փոխարեն, ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը թերեւս կարող էր իրացնել ՀՀ դատական օրենսգրքի 72 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված իր գործառույթը:

ՀՀ ՍԳ անդամ՝

Հ. ՆԱԶԱՐՅԱՆ  
11.02.2009թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՆ ԹԵՀՐԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԻԳՐՈՒՆԵՐԳԵՏԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**17 փետրվարի 2009թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի հունիսի 25-ին՝ Երևանում եւ 2008 թվականի հունիսի 19-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի հիդրոէներգետիկ նախագծի ուսումնասիրության եւ իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանային երթուղիների դյուրացման կանոնա-

կարգում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարի տեղակալ Ա. Միմոնյանի բացատրությունները, հետազոտելով կանոնակարգը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ջ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի հիդրոէներգետիկ նախագծի ուսումնասիրության եւ իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանային երթեւեկության դյուրացման կանոնակարգն ստորագրվել է 2008 թվականի հունիսի 25-ին Երեւանում եւ 2008 թվականի հուլիսի 19-ին Թեհրանում՝ երթեւեկությունը եւ Արաքս գետը հատելը դյուրացնելու, ինչպես նաեւ ուսումնասիրության տարածքում ժամանակավոր բնակության վայրերի, վարարումները կանխելու համար նախատեսված կառույցների եւ հիդրոէներգիայի օգտագործման համար նախատեսված տարածքների հիմնումը՝ հիդրոէլեկտրակայանների նախագծումն ու կառուցումն իրականացնելու համար համապատասխան պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Կանոնակարգով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Շինարարության ընթացքում Հայաստանի եւ Իրանի տարածքներում առանձնացնել երկու ընդհանուր գոտիներ: Երաշխավորել, որ այդ գոտիների սահմանագծման համապատասխան աշխատանքներն ավարտվեն կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:
- Իրականացնել երթեւեկության դյուրացումներ շինարարության ընթացքում Հայաստանի եւ Իրանի տարածքներում Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանապահ մարմինների կողմից առանձնացված երկու ընդհանուր գոտիներում: Ընդհանուր գոտիների մուտքի եւ ելքի մոտ տեղակայել սահմանապահների կողմից հսկվող անցակետեր:
- Երաշխավորել Արաքս գետի հիդրոէլեկտրակայանների նախագծման եւ կառուցման աշխատանքներում ներգրավվող մասնագետների եւ բանվորների երթեւեկության, Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանը հատող փոխադրամիջոցների, սարքավորումների, շինանյութերի եւ շինարարության ընթացքում անհրաժեշտ այլ պարագաների փոխադրման դյուրացումները:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- Հիդրոէլեկտրակայանների նախագծման ու կառուցման ընթացքում աշխատանքներն իրականացնող մասնագետներին եւ բանվորներին տրամադրել անցագրեր՝ կանոնակարգով նախատեսված կարգով:
- Հոգալ իր տարածքի սահմաններում ժամանակավոր բնակության վայրերի, վարարումները կանխելու համար նախատեսված կառույցների եւ հիդրոէներգիայի օգտագործման համար նախատեսված տարածքների ուսումնասիրության, նախագծման, պատրաստման ու կառուցման հետ կապված ծախսերը:

3. Կանոնակարգի հայերեն, պարսկերեն, անգլերեն տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում տարածայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

4. Կանոնակարգն ուժի մեջ կմտնի Կողմերի ներպետական օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ ընթացակարգերն ավարտելու մասին վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից եւ ուժի մեջ կմնա մինչեւ Արաքսի հիդրոէլեկտրակայանի շահագործման վերջնական հանձնման մասին հայտարարության կազմումը Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարական հանձնաժողովների կողմից:

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի հունիսի 25-ին՝ Երեւանում եւ 2008 թվականի հուլիսի 19-ին Թեհրանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջեւ Արաքս գետի հիդրոէներգետիկ նախագծի ուսումնասիրության եւ իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանային երթելեկության դյուրացման կանոնակարգում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**17 փետրվարի 2009 թվականի  
ՍԳՈ- 788**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ`  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՕՊԵԿ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՄԻՋԵՎ «ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ`  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**17 փետրվարի 2009 թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ.Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ.Ղուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ.Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Ս. Ավետիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի դեկտեմբերի 23-ին Վիեննայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից քննարկվելու և արժեքավորվելու մասին» հարցադրանակի նկատմամբ առաջարկված լուծարման հարցը:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, տեղեկանքները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի փոխառության համաձայնագիրն ստորագրվել է 2008թ. դեկտեմբերի 23-ին՝ Վիեննա քաղաքում:

Համաձայնագրի նպատակն է աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողների եւ առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող գյուղական ձեռնարկություններին:

Ըստ համաձայնագրի՝ ՄԶՕՀ-ն համաձայնում է համաձայնագրում ամրագրված պայմաններին համապատասխան ՀՀ-ին տրամադրել տասնչորս միլիոն ԱՄՆ դոլար: Փոխառության հիմնական գումարի վերադարձն սկսվում է 2014թ. հունվարի 15-ից եւ ավարտվում 2028թ. հուլիսի 15-ին:

2. Ըստ քննության առարկա համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

սկսած 2014 թվականից կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին եւ հուլիսի 15-ին, պարբերաբար Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի հաշվին վճարել տարեկան տոկոսավճար՝ Փոխառության մայր գումարից դուրս գրված եւ օգտագործված գումարի 3,2%-ի չափով, տարեկան ծառայավճար՝ Փոխառության մայր գումարից դուրս գրված եւ օգտագործված գումարի 1,0%-ի չափով,

արտոնյալ ժամկետի ավարտից անմիջապես հետո վերադարձնել մայր գումարը դոլարով կամ այլ ընդունելի՝ ազատ փոխարկելի որևէ արժույթով, վճարման պահին եւ վճարման վայրում գործող շուկայական փոխանակման արժեքով: Վճարումները կատարել 30 կիսամյակային վճարումներով՝ 3-րդ հավելվածով սահմանված չափով եւ ժամկետներում:

Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի համագործակցության հիմք է հանդիսացել 2005 թվականի



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

փետրվարի 23-ին Վիեննայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ ներդրումների խրախուսման եւ պաշտպանության մասին համաձայնագիրը /ՄԴՈ-590/: Ըստ վերը նշված համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է Հիմնադրամի կողմից իր տարածքում կատարվող ներդրումներին տրամադրել առավելագույն բարենպաստման ռեժիմ եւ ներդրումների նկատմամբ ցուցաբերել արդարացի եւ անաչառ վերաբերմունք, ապահովել դրանց լիարժեք պաշտպանվածությունն ու անվտանգությունը:

Քննարկվող համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին, ինչպես նաեւ կարևոր իրավական երաշխիք են ստեղծում աղքատության հաղթահարման բնագավառում Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի համագործակցության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2008 թվականի դեկտեմբերի 23-ին Վիեննայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**17 փետրվարի 2009 թվականի  
ՄԴՈ-789**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԵՐԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՋԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ԵՎ ՋՐԱՀԵՌԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ)  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**17 փետրվարի 2009 թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Ջ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ֆինանսավոր-

ման համաձայնագրում (Համայնքային ջրամատակարարման եւ ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունների՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 23.01.2009թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի նոյեմբերի 24-ին: Համաձայնագրի նպատակն է բարելավել ջրամատակարարման եւ ջրահեռացման ծառայությունների որակը Ծրագրի իրականացման մարմնի սպասարկման տարածքում՝ ապահովելով որակյալ եւ կենսունակ ջրամատակարարումը, ինչպես նաեւ արդյունավետ եւ կայուն ջրահեռացման ծառայությունների մատուցումը եւ ամրապնդելով ծրագրի իրականացման մարմնի կարողություններն ու կայուն զարգացման նախադրյալները:

2. Ըստ համաձայնագրի՝ վարկատուն պարտավորվում է վարկառուի ն տրամադրել 12.800.000 SDR, որը համարժեք է 20.000.000 ԱՄՆ դոլարին:

3. Համաձայնագիրը սահմանում է նշված գումարի վճարման ժամկետները, ինչպես նաեւ վճարման ենթակա տոկոսադրույքների եւ սպասարկման վճարների չափը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վարկի տոկոսադրույքները եւ մայր գումարը վճարել համաձայնագրով սահմանված մարման ժամանակացույցին համապատասխան,
- ապահովել, որ Ծրագիրն իրականացվի Ծրագրի իրականացման մարմնի կողմից՝ համաձայնագրով սահմանված կարգին ու ժամանակացույցին համապատասխան,
- հիմնել Ջրային տնտեսության պետական կոմիտեի Ջրային տնտեսության զարգացման եւ բարեփոխումների ԾԻԳ հիմնարկը՝ որպես համաձայնագրի վերահսկման գրասենյակ,
- կառավարման կապալառուի հետ համատեղ յուրաքանչյուր տարի ուսումնասիրել Ծրագրի իրականացման մարմնի ֆինանսական կարգավիճակը եւ նախատեսված ֆինանսական կատարողականը,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

- իր տարեկան բյուջեում ներկայացնել Ծրագրի իրականացման մարմնի այն ֆինանսական պահանջները, որոնք հնարավոր չէ բավարարել Ծրագրի իրականացման մարմնի հավաքած եկամուտներից,
- Ծրագրի համար պահանջվող եւ ֆինանսավորման միջոցներից ֆինանսավորվելիք բոլոր խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել համաձայնագրի դրույթներին համապատասխան,
- վարել կամ հանձնարարել վարել ֆինանսական կառավարման համակարգ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2008 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջև ֆինանսավորման համաձայնագրում (Համայնքային ջրամատակարարման եւ ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**17 փետրվարի 2009 թվականի  
ՍԳՈ-790**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐՈՊԱ-ԿՈՎԿԱՍ-ԱՍԻԱ ՄԻՋԱՆՅՔԻ  
ՉԱՐԳԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ»  
ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ «ՄԱՔՍԱՅԻՆ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**17 փետրվարի 2009 թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Գ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի դեկտեմբերի 13-ին Աստանայում ստորագրված՝ «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին» հիմնական բազմակողմ համաձայնագրի «Մաքսային ըն-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

թացակարգերի եւ փաստաթղթերի մշակման մասին» տեխնիկական հավելվածում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 2008 թվականի դեկտեմբերի 19-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին» հիմնական բազմակողմ համաձայնագրի «Մաքսային ընթացակարգերի եւ փաստաթղթերի մշակման մասին» տեխնիկական հավելվածում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունն ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 13-ին՝ Աստանայում:

2. Նշված արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար նախատեսում է միջազգային առեստրում աջակցելու հայկական բեռների տարանցմանը եւ դրանով իսկ նպաստելու եւ ավելացնելու միջազգային բեռնափոխադրումների ծավալը:

3. Արձանագրությամբ «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին» հիմնական բազմակողմ համաձայնագրի 11 հոդվածին եւ Մոֆիայում հաստատված ՏՐԱՍԵ-ԿԱ միջկառավարական հանձնաժողովի (IGC) Ռազմավարության 5.2, 5.3, 5.5 եւ 7.3 գլուխներին համապատասխան համաձայնություն է ձեռք բերվել Հիմնական համաձայնագրի «Մաքսային ընթացակարգերի եւ փաստաթղթերի մշակման մասին» հավելվածում կատարել փոփոխություններ:

Հիմնական համաձայնագրի «Մաքսային ընթացակարգերի եւ փաստաթղթերի մշակման մասին» տեխնիկական հավելվածի 2-րդ հոդվածի («Միջազգային կոնվենցիաներ») 1-ին կետում ամրագրված պարտավորությունների համաձայն՝ Կողմերին խորհուրդ է տրվում հնարավորինս կարճ ժամանակահատվածում միանալ 3 միջազգային համաձայնագրերի, իսկ տվյալ դրույթը լրացնող Արձանագրության կետ 1-ը մշակված ցանկը համալրում է եւս 14 համաձայնագրերով, մասնավորապես՝

դ. Կիոտոյի կոնվենցիա («Մաքսային ընթացակարգերի պարզեցման եւ ներդաշնակեցման մասին» 1973 թվականի միջազգային կոնվենցիա՝ լրամշակված 1993 թվականին),

ե. «Մաքսային բեռնարկղերի պահեստավորման մասին» 1994 թվականի կոնվենցիա,

զ. «Անիվային փոխադրամիջոցների համար ընդհանուր տեխնիկական կանոնակարգերի հաստատման մասին» 1998 թվականի համաձայնագիր (AETR),

է. «Միջազգային առեւտրում տրանսպորտային բեռնահամալիրների օպերատորների պարտավորությունների մասին» ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հարցերով հանձնաժողովի 1991 թվականի կոնվենցիա,

ը. 1975 թվականի «TIR մաքսային կոնվենցիա»,

թ. «Ավտոմոբիլային ճանապարհներով վտանգավոր բեռների միջազգային փոխադրման մասին» (ADR) կոնվենցիա,

ժ. «Շուտ փչացող ապրանքների/սննդամթերքի միջազգային փոխադրման (ATP) եւ այդ փոխադրումների համար մասնագիտացված տրանսպորտային հնարավորությունների մասին» 1970 թվականի համաձայնագիր,

ժա. «Միջազգային ծովային հաղորդակցության դյուրացման մասին» 1965 թվականի (FAL) կոնվենցիա,

ժբ. «Ապահով բեռնարկղերի մասին» 1972 թվականի միջազգային (CSC) կոնվենցիա,

ժգ. «Ծովում որոնողական եւ փրկարարական աշխատանքների մասին» 1979 թվականի միջազգային (SAR) կոնվենցիա,

ժդ. Իննմասատի կոնվենցիա («Ծովային արբանյակային կապի միջազգային կազմակերպության մասին» 1976 թվականի կոնվենցիա),

ժե. Միջամտության կոնվենցիա («Բաց ծովերում նավթից աղտոտման պատահարների դեպքերում միջազգային միջամտության մասին» 1969 թվականի կոնվենցիա),

ժզ. «Երկաթուղով վտանգավոր բեռների միջազգային փոխադրումների մասին» 1996 թվականի կանոնակարգ (RID),

ժէ. «Ավտոմոբիլային ճանապարհներով միջազգային ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների համաձայնագրի մասին» 1973 թվականի կոնվենցիա եւ 1978 թվականի Կոնվենցիայի արձանագրությունը:

Արձանագրությամբ նախատեսվում է, որ եթե տարանցման գործունեության համար կիրառվող ընթացակարգերն իրականացվում են համապատասխան պետության մաքսային օրենսդրության պահանջների համաձայն, ապա միջազգային բեռնափոխադրման՝ ներառյալ տարանցիկ փոխադրման համար նախատեսված բեռները.

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

որպես կանոն, փոխադրման ընթացքում չեն ենթարկվի մաքսային զննման, բացառությամբ համապատասխան պատասխանատու մաքսային վարչակազմի կանոնների եւ կանոնակարգումների համապատասխանությունն ապահովելու դեպքերի: Ելնելով նշվածից՝ մաքսային մարմինների կողմից կբացառվեն մաքսային կնիքների եւ այլ անվտանգության միջոցների ստուգումը մուտքի եւ ելքի կետերում. տրանսպորտային գործունեության համար չեն ենթարկվի որեւէ լրացուցիչ մաքսային ձեւակերպման կամ պահանջի, որոնք կիրառվում են մաքսային տարանցիկ ռեժիմի դեպքում:

Միաժամանակ, արձանագրությամբ նախատեսվում է, որ մաքսային ընթացակարգերի պարզեցման եւ տարանցման ժամանակահատվածի կրճատման նպատակով, ինչպես նաեւ Հիմնական բազմակողմ համաձայնագրի շրջանակներում բեռնափոխադրող ընկերությունների համար (երկաթուղի, ցամաք եւ ծով) «ՏԲԱՍԵԿԱ» լոգոն պետք է նշվի փոխադրվող բեռների մաքսային հայտարարագրի վրա (Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցք):

Կողմերը փոխադրվող բեռների համար նշված մաքսային հայտարարագրերի միջոցով կմշակեն կանոններ բեռների պարզեցված անցկացումը կիրառելու համար:

Միջազգային առևտրի եւ բեռների տարանցմանն աջակցելու նպատակով Կողմերը բեռներ առաքելիս հաջորդական տարանցման գործունեության համար բոլոր հնարավոր միջոցները կձեռնարկեն պահանջված տեղեկատվության հստակության եւ ամբողջականության ապահովման համար, անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն ապահովելու տարանցման ենթակա բեռների մաքսագերծումը բեռների նշանակման վայրի մաքսատանը կատարելու համար եւ բեռների մաքսագերծումը կփորձեն իրականացնել բեռների վերջնական նշանակման վայրին հնարավոր մոտ գտնվող վայրում:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2007 թվականի դեկտեմբերի 13-ին Աստանայում ստորագրված՝ «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին» հիմնական բազմակողմ համաձայնագրի «Մաքսային ընթացակարգերի եւ փաստաթղթերի մշակման մասին» տեխնիկական հավելվածում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**17 փետրվարի 2009 թվականի  
ՍԳՈ- 791**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
Գ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՍԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 113 ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 9-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ  
114 ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**24 փետրվարի 2009թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Ջ. Դուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 71 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Կարախանյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի եւ 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(54)2010  
74

Գործի քննության առիթը Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Կարախանյանի՝ 09.12.2008թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ աշխատանքային օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, ուսումնասիրելով նաեւ վեճի առարկա հարցի շրջանակներում ՀՀ միջազգային պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ աշխատանքային օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող հոդվածների նորմերը սահմանում են.

«Հոդված 113. Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ

1. Գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաեւ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

...

9) աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով.»:

«Հոդված 114. Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքը

4. Աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չի կարող համարվել՝

...

5) տարիքը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը»:

2. Քաղ. Սարգիս Ղանթարջյանը 2003 թվականի մարտ ամսից մրցույթի արդյունքում զբաղեցրել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի «Կառավարման եւ գործարարության» ամբիոնի վարիչի պաշտոնը, նրա հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Ժամկետը լրանալու պատճառով, 20.03.2008թ. նույն ֆակուլտետի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար անցկացված

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մրցույթում Ս. Ղանթարջյանը կրկին ճանաչվել է հաղթող եւ «ԵՊՀ ամբի-  
ոնների վարիչների ընտրությունների ընթացակարգով» սահմանված կար-  
գի համաձայն ԵՊՀ ռեկտորի եւ նրա միջեւ կնքվել է աշխատանքային  
պայմանագիր, որով աշխատանքային պայմանագրի ժամկետը երկա-  
րացվել է 5 տարով՝ մինչեւ 20.03.2013թ.: Հիմք ընդունելով ՀՀ աշխատան-  
քային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ ԵՊՀ ռեկտորն իր՝  
28.08.2008թ. հրամանով Ս.Ղանթարջյանին ազատել է զբաղեցրած պաշ-  
տոնից:

Քաղ. Սարգիս Ղանթարջյանը 26.09.2008թ. դիմել է Կենտրոն եւ Նորք-  
Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝  
28.08.2008թ. կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին  
ԵՊՀ ռեկտորի հրամանը վերացնելու, աշխատանքում վերականգնվելու եւ  
հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար վնասի հա-  
տուցում ստանալու պահանջով: Իր պահանջը հիմնավորելու համար Ս.  
Ղանթարջյանը վկայակոչել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114 հոդվա-  
ծի 4-րդ մասի 5-րդ կետը, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրեն-  
քի 11 եւ 31 հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածը:

Գտնելով, որ վեճը լուծելու համար կիրառման ենթակա օրենքի դրույթ-  
ները՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝  
որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրի դեպքում, ինչպես  
նաեւ 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ «բացառությամբ այն դեպքերի,  
երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրա-  
վունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» բառերը հակասում են ՀՀ Սահ-  
մանադրության 14.1. հոդվածի դրույթներին, Երեսնի Կենտրոն եւ Նորք-  
Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր  
Գ. Կարախանյանը՝ կասեցնելով գործի վարույթը, դիմել է սահմանադրա-  
կան դատարան:

3. Դիմող կողմն իր դիրքորոշումը հիմնավորում է հետեւյալ փաստարկ-  
ներով. ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածի համաձայն բոլորը հավա-  
սար են օրենքի առջեւ: Խտրականությունը՝ անկախ տարիքից կամ անձ-  
նական, սոցիալական կամ այլ բնույթի հանգամանքներից, արգելվում է:  
Աշխատանքային օրենսգրքի վիճարկվող հոդվածներից հետեւում է, որ  
գործատուն իրավունք ունի լուծելու աշխատողի հետ կնքված ցանկացած  
աշխատանքային պայմանագիր (թե՛ անորոշ եւ թե՛ որոշակի ժամկետով  
կնքված)՝ հիմք ընդունելով այն փաստը, որ աշխատողն ունի կենսաթոշակ  
ստանալու իրավունք կամ այն ստանում է, այսինքն՝ լրացել է վերջինիս 65  
տարին՝ առանց գնահատման առարկա դարձնելու նրա մասնագիտական  
ունակությունները: Նման մոտեցումը հակասում է ոչ միայն ՀՀ Սահմա-

նադրությամբ երաշխավորված նշված սկզբունքին, այլ նաև ՀՀ կողմից վավերացված Եվրոպական սոցիալական խարտիային, որի 24 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքից ազատվելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են ճանաչել աշխատանքից միայն այնպիսի հիմնավոր պատճառներով աշխատողի ազատվելու իրավունքը, որոնք կապված են նրա ընդունակությունների կամ վարքի հետ կամ հիմնված են ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա: Վերոնշյալից հետևում է, որ միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունք է աշխատանքային հարաբերություններում տարիքային խտրականության վերացումը: Եւ հարկ է արձանագրել նման տարիքային սահմանափակման ծայրահեղ անթույլատրելիությունը հատկապես այն դեպքերի համար, երբ աշխատողի հետ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր, քանի որ գործատուն որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու պահին արդեն իսկ գիտակցում է աշխատողի՝ կենսաթոշակային տարիքը լրացած լինելու կամ պայմանագրի գործողության ընթացքում դրա լրանալու ենթակա լինելու մասին: Այսինքն՝ աշխատանքային պայմանագիր կնքելու պահին գործատուն գնահատում է կենսաթոշակային տարիքը լրացած աշխատողի ունակությունները, եւ դրանք համարելով իր համար ընդունելի՝ կնքում է համապատասխան աշխատանքային պայմանագիր, որպիսի դեպքերում դրա լուծումը տարիքի պատճառով անթույլատրելի է:

4. Պատասխանողը գտնում է, որ 2005 թվականին սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրված տարիքային խտրականության արգելման սկզբունքը վերաբերում է նաև քաղաքացու կենսաթոշակային տարիքին՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացման տեսանկյունից: Դա նշանակում է, որ պետությունը պարտավոր է օգտագործել իրավական միջոցներ՝ աշխատանքի եւ զբաղվածության ոլորտում տարեց ու երիտասարդ անձանց միջև իրավական հավասար հնարավորություններ ստեղծելու եւ խրախուսելու ուղղությամբ, եւ, մասնավորապես՝ տարեց անձանց հետ աշխատանքային պայմանագրերը լուծելու գործընթացներում:

Գործատուն իր նախաձեռնությամբ կարող է լուծել աշխատանքային պայմանագիրն օրինական տարբեր հիմքերով, օրինակ, աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդված, 1-ին մաս, 4-րդ կետ), աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդված, 1-ին

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

մաս, 6-րդ կետ), աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդված, 1-ին մաս, 7-րդ կետ) եւ այլն: Մինչդեռ, եթե կենսաթոշակային տարիքի հասած անձը կատարում է աշխատանքային իր պարտականություններն ամբողջ ծավալով, համապատասխանում է իր զբաղեցրած պաշտոնին եւ չի կորցրել գործատուի վստահությունը, ապա կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելը խնդրահարույց է հատկապես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված տարիքային խտրականության արգելման սկզբունքի իրացման տեսանկյունից եւ գործատուին ընձեռում է ժամկետային աշխատանքային պայմանագիրը լուծելու աննախադեպ լայն հայեցողություն եւ կամայականության բարձր աստիճան դրսևտրելու հնարավորություն: Այսպիսով, առկա է անհամապատասխանություն գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման ինստիտուտի խնդիրների եւ իրավապարզավորման միջեւ:

Պատասխանողը գտնում է, որ օրենսդրական ընդհանուր ընթացակարգերով հիշյալ դրույթները վերանայելը եւ կատարելագործելը կարող են նպաստել իրավակիրառական պրակտիկայի իրավաչափ զարգացմանը, ինչն արդեն իրականացվում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների կողմից:

5. ՀՀ Սահմանադրության 1, 3 եւ 14.1. հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ, խտրականության ամեն մի դրսևտրում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհատի եւ պետության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը եւ, առաջին հերթին՝ պետության պարտականությունը՝ կյանքի բոլոր բնագավառներում անձի ազատ եւ արժանավայել զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում: Այն երաշխավորված է նաեւ աշխատանքի բնագավառում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 32 հոդվածում (1-ին մաս), համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 48 հոդվածում որպես պետության հիմնական խնդիրներ են նախատեսված բնակ-

չության զբաղվածությունը նպաստելը (2-րդ կետ), տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակ ապահովելը:

Աշխատանքի բնագավառում անհատի սահմանադրական իրավունքների ու ազատությունների անմիջական իրականացման եւ պաշտպանության խնդիրների կարգավորմանն է կոչված ՀՀ աշխատանքային օրենսդրությունը, որի նպատակն է սահմանել անձանց աշխատանքային իրավունքների եւ ազատությունների պետական երաշխիքները, պաշտպանել աշխատողների եւ գործատուների իրավունքներն ու շահերը (ՀՀ աշխ. օր.-ի 2 հոդված), եւ որպես աշխատանքային հարաբերությունների կարգավորման սկզբունք է նախատեսված կողմերի իրավահավասարությունը՝ անկախ տարիքից, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից (ՀՀ աշխ. օր.-ի 3 հոդվածի 3-րդ կետ):

Աշխատանքի իրավունքն իրացվում է աշխատանքային հարաբերությունների միջոցով, որոնք ծագում, փոփոխվում եւ դադարում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14, 60, 85, 86, 91, 100, 101, 105, 106, 109-114 եւ 120 հոդվածներով սահմանված ընդհանուր կարգով: Օրենսգրքի 6 հոդվածը նախատեսում է աշխատանքային հարաբերությունների իրավակարգավորման այնպիսի կարեւոր սկզբունք, ինչպիսին դրանց կարգավորումն է պայմանագրերի հիման վրա, որոնք չեն կարող բովանդակել այնպիսի պայմաններ, որոնք աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված աշխատանքային պայմանների համեմատ վատթարացնում են աշխատողի դրությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83, 84 հոդվածներում սահմանված են աշխատանքային պայմանագրի ընդհանուր հասկացությունն ու բովանդակությունը (պայմանները):

Աշխատանքային պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով, եթե պայմանագրի գործողության ժամկետը նշված չէ, եւ որոշակի ժամկետով, եթե այն նշված է (ՀՀ աշխ. օր.-ի 94 հոդված), իսկ օրենսգրքի 95 հոդվածի 2-րդ մասի համաձայն ընտրովի պաշտոններում աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է ընտրված ժամանակահատվածով: Այդպիսի նորմատիվ դրույթներ են պարունակում նաեւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6 եւ 15 հոդվածները:

Աշխատանքային պայմանագրի լուծման (հետեւաբար՝ նաեւ աշխատանքային հարաբերությունների դադարման) հիմքերը նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածում, այդ թվում՝ նաեւ գործատուի նախաձեռնությամբ (4-րդ կետ): Վերջինիս իրականացման կարգն ու պայմանները սահմանված են օրենսգրքի 113 հոդվածում, որի 1-ին մասը

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նախատեսում է անորոշ եւ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետը լրանալը լուծելու՝ գործատուի իրավունքի իրացման դեպքերը, այդ թվում՝ նաեւ աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու հիմքով (9-րդ կետ): Միաժամանակ, օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետն աշխատանքային պայմանագրի լուծման օրինական պատճառ չդիտարկելով աշխատողի տարիքը, նախատեսում է բացառություն՝ կապված անձի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հետ, մասնավորապես, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը: Ծերության (սոցիալական) կենսաթոշակի չափն ու նշանակման պայմանները սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-32 հոդվածներով:

6. Մույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը՝ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետի պահանջներով, կարելոքում է վիճարկվող եւ դրանց հետ փոխկապակցված վերոհիշյալ նորմերում մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, այդ իրավունքների սահմանափակումների թույլատրելիությունը՝ որպես այդ նորմերի սահմանադրականության գնահատման մեկնակետ: Այդ նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 32 հոդվածում երաշխավորված աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու եւ իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝ կապված աշխատանքային պայմանների, անձանց անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, եւ նույնիսկ նախատեսել առանձին պաշտոններ զբաղեցնելու եւ պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են եւ ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ աշխատանքային հարաբերությունների հաստատման (պահպանման) խնդրում օրենքով կամ աշխատանքային պայմանագրով առանձին աշխատողների առնչությամբ



սահմանային տարիք նախատեսելն արդարացված է, եթե այն հետապնդում է իրավաչափ նպատակներ, մասնավորապես պայմանավորված է կատարվող աշխատանքի բնույթով կամ առանձնահատկությամբ: Այս առումով, սահմանադրական դատարանն արդարացի է համարում հանրային (պետական եւ համայնքային) ծառայության բնագավառը կարգավորող օրենսդրության ակտերով ծառայողի պաշտոնավարման սահմանային տարիք նախատեսելուն զուգընթաց գործատուի եւ կենսաթոշակային տարիքի հասած ու աշխատանքային նորմատիվ պահանջները բավարարող աշխատողի միջեւ երկկողմ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու իրավական հնարավորության նախատեսումը եւ դրա հիման վրա աշխատանքային հարաբերությունների կայունությունն ապահովելը:

Աշխատանքի ընտրության ազատությունը պայմանավորված է, նախ՝ աշխատանքային հարաբերությունների հաստատման ու դադարման երկկողմ ազատ կամահայտնության ապահովման օրենսդրական հատակ երաշխիքների առկայությամբ, որոնք նաեւ անհրաժեշտ են ՀՀ Սահմանադրության ինչպես 32 հոդվածում (1-ին մաս) նախատեսված անձի իրավունքի իրացման, այնպես էլ 8 հոդվածում (2-րդ մաս) ամրագրված սկզբունքին համապատասխան տնտեսավարման շուկայական հարաբերությունների ազատ ու բազմակողմ զարգացման համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 14.1. եւ 32 հոդվածների դրույթներին համապատասխան աշխատանքի իրավունքի ազատ եւ անխտրական իրացումն անհրաժեշտաբար պետք է երաշխավորելի լինի աշխատանքային հարաբերությունների բոլոր բնագավառներում:

7. Աշխատանքային պայմանագրի, որպես երկկողմ իրավունքներով ու պարտականություններով պայմանավորված համաձայնության (ՀՀ աշխ. օր.-ի 83 հոդված), բովանդակությունից է անմիջականորեն բխում ինչպես աշխատողի, այնպես էլ գործատուի նախաձեռնությամբ այն լուծելու իրավական հնարավորությունը (ՀՀ աշխ. օր.-ի 109 հոդվածի 3-րդ, 4-րդ կետեր): Աշխատանքային պայմանագիրը կնքվում է ազատ կամահայտնությամբ, հետեւաբար, կողմերը պետք է ազատ լինեն այն լուծելու ցանկություն դրսեւորելու հարցում: Աշխատանքով պայմանավորված հարաբերությունների կարգավորման պայմանագրային բնույթը միաժամանակ պահանջում է ոչ միայն իրավունքի իրացման, այլեւ պարտականության կատարման անհրաժեշտություն, եւ կողմերի, տվյալ դեպքում գործատուի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունքի իրացումը չպետք է պայմանավորված լինի նպատակահարմարությամբ կամ սուբյեկտիվ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

բնույթի այլ գործոնով, այլ հետապնդի արդար, իրավաբանորեն անբազրված որոշակի նպատակ՝ աշխատանքի իրավունքի իրացման սահմանադրորեն կանխորոշված սկզբունքներին համապատասխան:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 113 հոդվածում սահմանված են գործատուի նախաձեռնությանը աշխատանքային պայմանագրի լուծման դեպքերը՝ կապված իրավաբանական այնպիսի փաստերի հետ (կազմակերպության լուծարում, գործատուի սնանկ ճանաչվելը, աշխատողների թվաքանակի կրճատում, զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելը եւ այլն), որոնց առկայությամբ օբյեկտիվորեն անհնարին է աշխատանքային հարաբերությունների շարունակումը, կամ դրանք բացահայտ անարդյունավետ են: Այդ փաստերի հիմքում օրենսդիրը նախատեսել է կոնկրետ գնահատելի չափանիշներ: Մինչդեռ օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, եթե լրացել է աշխատողի կենսաթոշակային տարիքը, ընդ որում, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, որոշ այլ դեպքերում (1-ին մասի 3-րդ եւ 4-րդ կետեր), գործատուն օժտված չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու բացառիկ լիազորությամբ եւ կամընտրաբար կարող է այն լուծել, եթե « ... իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում» աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից, եւ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում է պայմանագիրը լուծվում՝ առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու: Փաստորեն, կենսաթոշակային տարիքի հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման հարցում օրենսդիրը դրսեւորել է ինպերատիվ (հրամայական) մոտեցում: Միաժամանակ, նույն օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն արգելված է գործատուի նախաձեռնությամբ լուծել աշխատանքային պայմանագիրը՝ պատճառ համարելով տարիքը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդպիսին:

8. Վերլուծելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոհիշյալ դրույթների բովանդակությունը, համադրելով դրանք անձի՝ աշխատանքի ազատ եւ անխտրական ընտրության սահմանադրական իրավունքի երաշխավորված իրականացման վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտած իր իրավական դիրքորոշումների հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա/ օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝

գործատուին լիազորում է աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու փաստի ուժով աշխատանքային պայմանագիրը միակողմ լուծելու հայեցողական իրավունքով՝ բացառելով անձի աշխատունակության (աշխատանքային պիտանիության) գնահատման որեւէ գործոնի կիրառման հնարավորություն, հետեւաբար՝ խտրական է եւ սահմանափակում է անձի՝ աշխատանքի ընտրության ազատությունը,

բ/ օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը, մի կողմից՝

- գործատուին արգելում է աշխատանքային պայմանագիրը միակողմ լուծել՝ հիմք ընդունելով աշխատողի տարիքը, այդպիսով բացառելով աշխատանքային հարաբերություններում տարիքային խտրականության եւ այդ հիմքով աշխատանքի ազատ ընտրության սահմանափակման որեւէ հնարավորություն, հետեւաբար՝ հետապնդում է ՀՀ Սահմանադրության 14.1., 32 հոդվածների պահանջներին համապատասխանող նպատակներ,

- մյուս կողմից՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» դրույթի մասով պարունակում է ՀՀ Սահմանադրության 14.1., 32 եւ 37 հոդվածներով երաշխավորված՝ աշխատանքի ազատ եւ անխտրական ընտրության ու սոցիալական ապահովության անձի իրավունքների միատեղ իրացմանը խոչընդոտող, ինչպես նաեւ աշխատանքի իրավունքի իրացումն անձի սոցիալական իրավունքի իրացման փաստով պայմանավորող ոչ իրավաչափ նորմեր՝ այդպիսով իմաստագրելով Սահմանադրության 32 եւ 37 հոդվածներով երաշխավորված անձի իրավունքների բովանդակությունն ու սահմանափակելով նրա հիմնական իրավունքները եւ ազատությունները:

9. ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի համաձայն պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Անդրադառնալով աշխատանքի ազատ, անխտրական ընտրության եւ այդ իրավունքի իրացման միջազգային փորձին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ներպետական իրավակիրառական պրակտիկայում աշխատանքի նկատմամբ որեւէ (այդ թվում՝ տարիքային) խտրականությունը, զբաղվածության ազատության ոչ իրավաչափ սահմանափակումները համատեղելի չեն իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության հիմնարար սկզբունքների հետ:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ այնքանով, որքանով չի երաշխավորում հավասար եւ ոչ խտրական իրավապայմանագրային հարաբերություններ աշխատողի եւ գործատուի միջեւ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1. եւ 32 հոդվածներին հակասող եւ անվավեր:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» բառակապակցության մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1. եւ 32 հոդվածներին հակասող եւ անվավեր:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**24 փետրվարի 2009 թվականի  
ՍԳՈ- 792**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ`  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐԻ  
ՀԻՄՆԱԳՐԱՄ ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**10 մարտի 2009թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Չ. Դուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի փետրվարի 26-ին ստորագրված` Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Սոցիալական ներդրումների հիմնադրամ երրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման համար» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը:

85 ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 1(54)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Սոցիալական ներդրումների հիմնադրամ երրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման համար» վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի փետրվարի 26-ին՝ Երեւան քաղաքում:

Համաձայնագիրը կնքվել է սկզբնական ծրագրին (Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ 2006թ. նոյեմբերի 1-ին ստորագրված՝ «Սոցիալական ներդրումների հիմնադրամ III ծրագիր» թիվ 4238-AM ֆինանսավորման համաձայնագրին) առնչվող միջոցառումների համար լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

Համաձայնագիրն ունի երեք առդիր՝ Առդիր 1/«Ծրագրի նկարագրություն»/, Առդիր 2 /«Ծրագրի իրականացումը»/, Առդիր 3 /«Մարման ժամանակացույց»/ եւ Հավելված: Առդիր 1-ը ներառում է Ծրագրի նպատակների իրականացման համար նախատեսվող միջոցառումները: Առդիր 2-ը ներառում է Ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ միջոցառումները, հակակոռուպցիոն միջոցառումները, Ծրագրի հաշվետվությունները, ֆինանսական կառավարումը, աուդիտը, գնումները, ապրանքների եւ աշխատանքների գնման առանձին մեթոդները, խորհրդատուների ծառայությունների գնման առանձին մեթոդները, ֆինանսական միջոցների մասհանումը, մասհանման պայմաններն ու ժամանակահատվածը: Առդիր 3-ը նախատեսում է մարման ժամանակացույցը՝ ներառելով վճարման կոնկրետ ժամկետը:

Համաձայնագրով սահմանված պայմաններին եւ դրույթներին համապատասխան Միջազգային զարգացման ընկերակցությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու է հինգ միլիոն երկու հարյուր հազար փոխառության հատուկ իրավունքին համարժեք /ՓՀԻ 5.200.000/ գումարով փոխառություն: Փոխառության հիմնական գումարի մարման ժամկետներն են՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը եւ հոկտեմբերի 1-ը, սկսած 2019թ. ապրիլի 1-ից մինչեւ 2028թ. հոկտեմբերի 1-ը՝ ներառյալ:

2. Ըստ քննության առարկա համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունը Ծրագրի իրականացման շրջանակներում ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

ինստիտուցիոնալ միջոցառումների մասով՝

պահպանել ՀՄՆՀ-ի /Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ/ այնպիսի կառուցվածք, աշխատակազմ եւ այլ ռեսուրսներ, որոնք կրավարարեն Ընկերակցության պահանջները,

ապահովել, որ ՀՄՆՀ-ի գործողություններն իրականացվեն համաձայն Գործառնական ձեռնարկում ամրագրված կամ նշված ընթացակարգերի,

ՀՄՆՀ-ի միջոցով ապահովել, որ Միկրոծրագրերը որոշվեն, գնահատվեն, հաստատվեն, իրականացվեն եւ վերջնական գնահատման ենթարկվեն համաձայն Գործառնական ձեռնարկում ամրագրված կամ նշված ընթացակարգերի,

ՀՄՆՀ-ն պետք է ուսումնասիրման եւ հաստատման նպատակով ընկերակցությանը ներկայացնի տարեկան աշխատանքային ծրագրերն ու բյուջեն, արդյունքների եռամսյակային հաշվետվություններ եւ արդյունքների տարեկան հաշվետվություններ Ծրագրի իրականացման վերաբերյալ.

լրացուցիչ համաձայնագրի մասով՝

Հայաստանի Հանրապետությունը պետք է իր իրավունքներն այնպես իրականացնի, որ պաշտպանվեն ե՛ւ ՀՀ-ի, ե՛ւ Ընկերակցության իրավունքները եւ իրագործվեն Ֆինանսավորման նպատակները.

հակակոռուպցիոն միջոցառումների մասով՝

ապահովել, որ ծրագիրն իրականացվի Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն եւ այլն:

Հարկ է նշել նաեւ, որ Ծրագիրն ուղղված է աջակցելու աղքատ եւ խոցելի խմբերի կենսամակարդակի բարձրացմանը, եւ Հայաստանի Հանրապետությունն իր քաղաքականությունն իրականացնելու է հետեւյալ գործիքների միջոցով՝

ա. բարելավելով համայնքային ենթակառուցվածքների եւ ծառայությունների մատչելիությունն ու որակը,

բ. խթանելով լրացուցիչ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը,

գ. ստեղծելով համայնքային ենթակառուցվածքների ստեղծմանն ու ծառայությունների մատուցմանն առնչվող աշխատատեղեր:

Քննարկվող համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին, ինչպես նաեւ կարեւոր իրավական երաշխիք են ստեղծում աղքատության հաղթահարման բնագավառում Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության համագործակցության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաս-

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

տանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2009 թվականի փետրվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Սոցիալական ներդրումների հիմնադրամ երրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման համար» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 մարտի 2009 թվականի  
ՍԳՈ-793**





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ  
ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**10 մարտի 2009թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի փետրվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Փոքր եւ միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիության ծրագիր» երաշխիքային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

89 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ ♦ 1(54)2010

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված սահմանադրական դատարանում 2009 թվականի մարտի 2-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց.**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի փետրվարի 26-ին՝ Երեւանում: Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության կողմից երաշխավորել ՀՀ կենտրոնական բանկի եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Փոքր եւ միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիության ծրագիր» վարկային համաձայնագրի (այսուհետ՝ Վարկային համաձայնագիր) շրջանակներում վճարման ենթակա բոլոր վճարումների պատշաճ եւ պարտաճանաչ կատարումը եւ վարկային համաձայնագրում շարադրված կամ հիշատակված՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ Վարկառու) բոլոր այլ պարտավորությունների պարտաճանաչ կատարումը:

2. Վարկային համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում երեք առդիր եւ մեկ հավելված, որոնցում ամրագրված են Ծրագրի այն միջոցառումները, որոնց իրականացմանն ուղղվում է վարկավորումը:

3. Վարկային համաձայնագրով սահմանված են Վարկառուին տրամադրվելիք վարկի չափը (50 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար), վարկի մարման եւ փակման ժամանակացույցը, վճարման արժույթի տեսակը: Վարկի հիմնագումարը պետք է մարել կիսամյակային մուծումներով՝ 2014 թվականի հուլիսի 15-ից մինչեւ 2035 թվականի հուլիսի 15-ը: Վարկառուի կողմից վճարման ենթակա սկզբնական վճարը հավասար է վարկի գումարի 0,25 տոկոսին:

4. Վարկային համաձայնագրով Վարկառուն պարտավորվում է պատշաճ եւ արդյունավետ իրագործել համաձայնագրի 1-ին առդիրում ամփոփված ծրագրի նպատակները, 2-րդ առդիրում ամփոփված ծրագրի իրականացման միջոցառումները, պահպանել 3-րդ առդիրում ամփոփված վարկի մարման ժամանակացույցը:

5. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

ա) հայտարարել Ծրագրի նպատակների հանդեպ իր պարտավորվածության մասին եւ այդ նպատակով երաշխավորել ՀՀ կենտրոնական

բանկի կողմից վարկի՝ համաձայնագրով վճարման ենթակա բոլոր վճարումների պատշաճ կատարումը,

բ) առանց Երաշխիքային համաձայնագրի դրույթների սահմանափակման, Վարկառուին տրամադրել Ծրագրի իրականացման համար պահանջվող ծախսերի կատարմանը չբավարարող միջոցները,

գ) երաշխավորել, որպեսզի Վարկառուն.

- իրականացնի Ծրագիրը ԾԻԳ-ի միջոցով՝ Գործառնական ձեռնարկի դրույթների եւ Ընդհանուր պայմանների 5 հոդվածի համաձայն,

- պահպանի ԾԻԳ-ը մինչեւ Ծրագրի ավարտը եւ ապահովի, որ ԾԻԳ-ը միշտ գործի Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ու համապատասխան եւ Բանկի պահանջները բավարարող ձեռով, աշխատակազմով ու ֆինանսական միջոցներով,

- պահպանի Գործառնական ձեռնարկն այնպիսի ձեռով եւ բովանդակությամբ, որն ընդունելի է Բանկի համար, պատշաճ կերպով կատարի Գործառնական ձեռնարկով նախատեսվող բոլոր իր պարտավորությունները եւ չփոխանցի, չփոփոխի, ուժը կորցրած չճանաչի կամ չհրաժարվի Գործառնական ձեռնարկից՝ առանց Բանկի թույլտվության,

- Ծրագրի իրականացումը խթանելու նպատակով վարկային միջոցների մի մասը լրացուցիչ համաձայնագրերի շրջանակում տրամադրի ՄՖՀ-ներին, որոնք կկնքվեն Վարկառուի եւ յուրաքանչյուր ՄՖՀ-ի միջեւ՝ Բանկի հաստատած պայմանների համաձայն,

- իրականացնի Ծրագրի առաջընթացի մոնիտորինգն ու գնահատումը եւ պատրաստի Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների դրույթների եւ Բանկի հետ համաձայնեցված ցուցիչների հիման վրա: Ծրագրի մասին յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ընդգրկի մեկ օրացուցային եռամսյակ եւ Բանկին ներկայացվի եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան 45 օր հետո,

- ապահովի ապրանքների եւ աշխատանքների գնումների կատարումը բացառապես Գնումների ուղեցույցի 1-ին բաժնի պահանջներին համապատասխան:

6. Համաձայնագրում ամրագրված են նաեւ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու կարգն ու ժամկետները: Ծրագրի ավարտի վերջնաժամկետը 2011 թվականի սեպտեմբերի 28-ն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

1. 2009 թվականի փետրվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Փոքր եւ միջին ձեռնարկությունների համար ֆինանսավորման մատչելիության ծրագիր» երաշխիքային համաձայնագրում անրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 մարտի 2009 թվականի  
ՍԳՈ- 794**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2009 թՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ` ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ»  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ` ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

**Քաղ. Երևան**

**10 մարտի 2009թ.**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի փետրվարի 26-ին ստորագրված` Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքագրված սահմանադրական դատարանում 2009 թվականի մարտի 2-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(54)2010  
93

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2009 թվականի փետրվարի 26-ին՝ Երեւանում: Ըստ համաձայնագրի՝ Միջազգային զարգացման ընկերակցությունը (այսուհետ՝ Ընկերակցություն) կենսական նշանակության ավտոճանապարհների ընտրված հատվածներն արդիականացնելու եւ շինարարության ոլորտում ժամանակավոր աշխատատեղեր ստեղծելու ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու է տասնվեց միլիոն հարյուր հազար փոխառության հատուկ իրավունքներին (SDR 16,1 միլիոն) համարժեք վարկ:

2. Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում երեք առդիր եւ մեկ հավելված, որոնցում ամրագրված են Ծրագրի այն միջոցառումները, որոնց իրականացմանն ուղղվում է վարկավորումը:

3. Համաձայնագրով սահմանված են տրամադրվելիք վարկի չափը, վարկի մարման եւ փակման ժամանակացույցը, վճարման արժույթի տեսակը: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է պարբերաբար Ընկերակցությանը վճարել պարտավճար՝ վարկի չօգտագործված գումարների դիմաց՝ ոչ ավելի, քան տարեկան 0,5 տոկոսի չափով, եւ սպասարկման վճար՝ վարկի առհանումների դիմաց՝ տարեկան 0,75 տոկոսի չափով: Վարկի հիմնագումարը պետք է մարել կիսամյակային մուծումներով՝ 2019 թվականի հուլիսի 15-ից մինչեւ 2029 թվականի հունվարի 15-ը:

4. Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է պատշաճ եւ արդյունավետ իրագործել համաձայնագրի 1-ին առդիրում ամփոփված Ծրագրի նպատակները, 2-րդ առդիրում ամփոփված Ծրագրի իրականացման միջոցառումները, պահպանել 3-րդ առդիրում ամփոփված վարկի հիմնագումարի մարման ժամանակացույցը, ապահովել Ծրագրի համար պահանջվող աշխատակազմով, ռեսուրսներով եւ տեխնիկական առաջադրանքներով, ֆինանսավորել Ծրագրի ծախսերի համամասնորեն 18 տոկոսը:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է նաեւ հետեւյալ պարտավորությունները.

ա) ապահովել ՀՀ տարեկան բյուջեից բավարար միջոցների տրամադրումը ճանապարհաշինական ոլորտին՝ միջպետական եւ հանրապետական ավտոճանապարհների պահպանման աշխատանքների համար,

բ) թույլատրել ավտոճանապարհների եւ մայրուղիների նախագծման եւ կառուցման վերաբերյալ Ստանդարտացման եվրոպական հանձնաժողովի առաջարկած նորմերի կիրառումը Ծրագրի շրջանակներում՝ ավտոճանապարհների նախագծման եւ կառուցման աշխատանքներում,

գ) ապահովել, որպեսզի Ծրագրի գործողությունները չնպաստեն կամ չհանգեցնեն հողի ոչ կամավոր զավթման, եւ չնպաստեն կամ չհանգեցնեն պարկերի եւ պահպանվող տարածքների մուտքի ոչ կամավոր սահմանափակման,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

դ) ՏԿՆ-ի միջոցով ապահովել, որպեսզի Ծրագիրն իրականացվի Հակախոռոչային ուղեցույցների եւ ՇՄԿԸ դրույթների համաձայն, եւ չփոխանցել, չփոփոխել, ուժը կորցրած չճանաչել ՇՄԿԸ-ի որեւէ դրույթ կամ հրաժարվել դրա կատարումից՝ առանց Ընկերակցության կողմից նախապես կատարված ուսումնասիրության եւ համաձայնության,

ե) ՏԿՆ-ի միջոցով իրականացնել Ծրագրի առաջընթացի մոնիտորինգն ու գնահատումը եւ պատրաստել Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների դրույթների եւ Ընկերակցության հետ համաձայնեցված ցուցանիշների հիման վրա,

զ) ՏԿՆ-ի միջոցով պատրաստել եւ յուրաքանչյուր օրացուցային եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան 45 օր հետո Ընկերակցությանը ներկայացնել Ծրագրի՝ տվյալ եռամսյակի վերաբերյալ աուդիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները,

է) ՀՀ ֆինանսական հաշվետվությունները ՏԿՆ-ի միջոցով ենթարկել աուդիտի՝ Ընդհանուր պայմանների դրույթների համաձայն, որը պետք է ընդգրկի ՀՀ մեկ ֆինանսական տարի, եւ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս հետո Ընկերակցությանը ներկայացնել աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները,

ը) ապահովել, որ ապրանքների, աշխատանքների եւ խորհրդատվությունների գնումները կատարվեն բացառապես Ծրագրի առդիր 1-ի բաժին 3-ին համապատասխան:

6. Համաձայնագրում ամրագրված են նաեւ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու կարգն ու ժամկետները: Ծրագրի ավարտի վերջնաժամկետը 2010 թվականի դեկտեմբերի 31-ն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Մ Ե Ց**.

1. 2009 թվականի փետրվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ «Կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**10 մարտի 2009 թվականի  
ՍԳՈ-795**

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 15.03.2010թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70x100 1/16  
Տպաքանակը՝ 500

*ՀՀ ՄԴ փեդեկագիրը ՀՀ  
քարչրագույն որակավորման  
հանչնաժողովի որոշմամբ ընդգրկված է  
ալեհախոսությունների աղյուսքների  
տպագրման համար ընդունելի  
տարբերականների ցանկում*